

ԵՐ. ՕՏԵԱՆ ԵՒ ՄԻՔ. ԿԻՒՐՃԵԱՆ



ՖՐԱՆՔՈ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄ

||

ԿԱՐ


ԶԱՐԵՎԵԼԸ ԱՐԹԻՒ ԱՂԱ

(Թուրքական կետանիք)

ԿՈՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ Յ ԱԲԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿԻՑ

Վ. ԵՒ Թ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ



Ա. ՊՈԼԻՍ
Տպագր. Փ. ՕԾ. Գ. Ա. Ե. Ա. Յ. Ե.
1909

13 APR 2011
թիւ 18

Ա.Զ.Ս. ՄԱՏԵՆԱՅԱՐ

ԵՐ. ՕՏԵԱՆ ԵՒ ՄԻՔ. ԿԻՒՐՃԵԱՆ

891.99
0-79

Խ. ֆՐԱՆՔՈ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄ

ԿԱՄ

ԶԱՐՇԵԼԸ ԱՐԹԻՆ ԱՂԱ

(Կոլուական կետեմէ)

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ Յ ԱՐԱՐ

ՏԻՀ
1917

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

Վ. ԵՒ Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ



Կ. ՊՈԼԻՍ
Տպագր. Ո. ԱՅ. ԳԱ. ԵԱ. Խ. 1909

Ա. ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՆՁԵՐԸ

Արթին աղա.— Զարշըլլ վաճառական
Եւփիմէ.— Արթին աղայի կիմը
Ռոզ.— > > աղջիկը

Տօֆք. Շաւարտ.— Բժիշկ

Ագրիպաս աղա.— Արթին աղայի բարեկամը
Գառնիկ աղա.— Եւփիմէի եղբայր

Տիրան.— Խմբագիր

Լեւոն.— Փաստաբան

Վահան.— Դասաւու

Ռուսով.— Ռուսահայ մը

Նիկողոս աղայ.—

Ոստիկանապետ մը.—

Սիսակ.— Ծառայ

☞ Սոյն բատերախաղի ներկայացման իրաւունքը վերապահուած է նեղինակներուն որոնց պէտք է դիմել պայման ներու մասին :

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տեսարանը կը ներկայացնէ Արքին աղայի տան հիւրասենեակը . աշ ու ձախ եւ մէջտեղէն դուռներ, մէջտեղի դռան եռվ սեղան մը որուն վրայ զուրի սրուակ, գաւաք մը, զանգակ եւ բանի մը հոտի շիւեր կան : Բեմին ձախ կողմը թիկնարոս մը եւ աջ կողմը աքուներ :

ՏԵՍԻ. Ա.

ԱՐԹԻՆ ԱՂԱ. — ԵԽՖԻՄԷ

Եւփ.— Հաղար անդամ ըսած եմ քեզի որ մարդու առջեւ ինձի էֆթիկ չըսես, իմ անունս Եւփիմէ է Եւփիմէ... քսան տարի կը լայ կոր կարգուելնիս, դեռ այս կէտը չկրցանք հասկցնել քեզի... նորէն քիչ մը առաջ հւրեւու առջեւ էֆթիկ ըսիր . ամօթէս գեանին տակը անցայ :

Արք.— Ես ալ քեզի միլին անդամ ըսած եմ քի ինձի միւսիւ Բասքալ չըսես մարդու առջեւ . իմ անունս Արթին է պէ Արթին... տուն նասքը սա քսան տարուանս կիւղէլիմ Արթինը Բասքալը ըրիր հէ... ան չէ ամա հոգիդ սիրես սա Բասքալն ալ ո՞ւր տեղէն հանեցիր . իմ կիւցածս Բասքալ տէյի բայլաջօյին կը լսեն :

Եւփ.— Մ'ըսեր այդպէս վրադ կը ինդան . Բասքալը գաղղիերէն է, Յարութիւնին, Արթաքիին, Արթինին ալաֆրանւ կան է :

Արք.— Անունին ալաֆրանկան կը լլայ մի պէ... անունը անուն է վեսէլլամ... սա՞աթէ է ասիկա չէնէմի թարիի... իմ հօրս մօրս ալըսած անունը տուն եղար վոխող պէ կիւկի...

Եւփ.— Ո՞չ ինչ տղեղ բացատրուիրւս, վույ շիտակը կամչնամ կոր կիւկի ըլլալուս . քանի անդամ ըսած եմ որ առանկ

պէյով քայով չը խօսիս հետո, մարդու առջև ալ կընես
կոր վրաս տաք տաք քրտինք կիշնայ կոր:

Արք. — Եյ սա, պէ կընիկին ալաֆրանկան ի՞նչ է... ըսէ տէ
սորվինք:

Եւփ. — Պէ կընիկին ալաֆրանկան աթիկին է:

Արք. — Ադ էս ըրեր էֆթիկ հանըմ, ես 45 տարեկան մազս
մօրուքս ձերմըկցած մարդ եմ, ասանկ եկեր եմ ասանկ
պիտի երթամ. էս ալաֆրանկային խաթերը համար նէ
գանցաս կընամ ժողովել նէ ալ լեզուս... հիմայ քու ալաֆ-
րանկայիդ թախ օրթատեղը...

Եւփ. — (աղողակի ճը արջակելով) ու ականչերը գոցելով նի-
նալուակն զրայ կընայ) Ա՛հ չիմանամ չիմանամ:

Արք. — Կէնէ սընըրները պընեց (աղօտալով) Վարդուկ, եկուր
նայէ տուտուդ ի՞նչ կըլլայ կոր:

Եւփ. — Ա՛հ, ա՛հ, սիրտս... բաներ մը կըլլամ կոր... Ուօզ ըսէ՛
Ռոզ, Վարդուկը ի՞նչ է. աղջիկս պարտիդակցի սպասուհի
է...

Արք. — Հիմակ Ռոզիդ ա՛լ քեղի ալ...

ՏԵՍԻՎ. Բ.

ՆՈՅՆՔ — Ա.0.Զ

Ռոզ. — (վաղելով իը Տանէ). ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ դարձեալ...

ի՞նչ կայ տէր Աստուած (Տօրը +ովէ իւրիւոյ.)

Եւփ. — Ա՛խ Ռոզս. այս հայրդ զիս գերեզման պիտի իջեցնէ...
ախ կը մարիմ կոր, սեղանիս վրայէն հոսի սրուակ մը
բեր...

Ռոզ. — (բարձրէն իսկոյն արդակը բերելով հորուըդաւլ իրադա)

ու յետոյ հօրը), Հայր, նորէն ի՞նչ եղաւ:

Արք. — Ի՞նչ պիտի ըլլայ պան մըն ալ չեղաւ... պէլքի ալաֆ-
րանկային նամուլին տպանք... կիտէսքի սա կետնին տա-
կը անցնելիք ալաֆրանկան ամուճային տղան է...

Ռոզ. — (ինդալով) Դարձեալ Եւփիմէի Բասքալի կոի՞ւ է...

Եւփ. — (ինչո՞նչը ժողովէլով) կը ներեմ իրեն աղջիկս կը ներեմ,
որովհետեւ...

Արք. — Կը ներեմ մի... եէտիցի խալթա պաք, ի՞նչ մեղք
կործեցինք քի կը ներես կոր:

Եւփ. — Կաղաչեմ Բասքալ ալ քիշ մը մեղքցիր կնիկդ. նորէն
մի սկսիր:

Արք. — Կինէմի Բասքալ... հիմա ալ օրհնեալ բերանս պիտի
բանամ... պէ պապամ քեզի հազար անդամ ըսինքքի իմ
անունս Արթին է, Բասքալ բայլաչօին կըսեն. մենք հոս
բանաօմինա չենք խալտր կոր... Աստուած վկայ ինծի
անանկ կուգայ կոր քի երթամ նորէն մկրտուիմ, անանկ
անուն մը առնեմ քի ալաֆրանկա չունենայ, առ ալաֆ-
րանկան իճառ ընողին ա՛լ, Պոլսա մայնողին ա՛լ... ուր
տեղէն ալ կընաց էկաւ փէհիպան եախրայի պէս մեզի փա-
կաւ... պէ պապամ ես Եէնի Խարուցի եմ. գարատուն
կացած մարդ չե՛մ, դրաց օլարախ մնը գեղին խում-
լուխը տեսած եմ. տասը տարեկան էի չարչի ելայ, մահ-
տէսի հաճի Տարսալիչ աղային քով հնադ տարի աշակեր-
տութիւն ըրի, իմ թէրպիյէս հնա առած եմ. իմին թէփ-
թէրներս խասային թօփերն էին, Ճէտիլ զրիչս ալ Էստա-
զէն իլէ մախասը... տունէն չարչի չարչիէն տուն... ես
անանկ ալաֆրանկային սէմթը ոտք կիխած մարդ չեմ...
ինծի մինչեւ կարգուած օրս Արթին աղա կըսէին, հօրս մօրս
լեղուովը կը խօսէի, մէկը պան մը չէր ըսեր, կըռաքառը
ժամին դուրս լսած չ'ունէինք, անանկ գէլզէք՝ չըթ-
զըրըլորմ՝ նոր մօտա հէրփներու հետ տպարաի ասծու-
բարին ըրած չունէի... իրինկունը խանութը կոցելուս պէս
միզ շիտակ տուն կիրթայի, կալօշ բօթինս կը հանէի,
բապուճներս օտքս կանցունէի, կէճէլիկս կը հագնէի, սէ-
տիրին վրայ եան կուգայի, տիւզին հարուրնոց անարատ
շիշէն քովիկս... օխ պապամ կէլ քէչփիմ կէլ... (Երկուուն
ու կէլլէն) աղւոր աղւոր կը խմէի, կերակուրս կուտէի,
սամթը իրեք եղաւ մի, ալ Արթին ողան եօւղանին տա-
կը վինտուելու էր, տատուն շափախին աչքս կը պամայի,

սուրբ Աստուած տուն ինծի օգնական ըսելով խաչս կը հանէի, հայտէ նորէն չարշի: Մենք ասանկ մեծցած, ասանկ ապրած, տէտէտէն՝ անատան՝ պապատան ասանկ տեսած ենք, ալաֆրանկան էրածնուռ մէջը պիէ տեսած չունինք. քեզ առինք համայցա՞նք, ձանցցա՞նք, բարով խերով չանչնայինք. խախքութիւն մըն է փրթաւ, նայիս ալ Արթինը Բասքալ եղաւ, քիւլպաստըն քօթուեթ եղաւ, Էֆթիկը Եւփիմէ եղաւ, ջօրպան ապուր եղաւ, խաղլին սուրճ եղաւ, կէմէլիկը՝ բապուճը պարիթ եղաւ, օտուընիս ալ նասրը եղաւ. տիւզ ռախին՝ քօնեաք շառթշու պէօղի փոխուեցաւ, լեզունիս կըուարարէն պրնուեցաւ, մեր կեանքն ալ հառամ եղաւ... քանն տարի է դպրոց կալու պէս ամէն իրիկուն տուն կուգանք տահա սա ալաֆրանկային տիրլօման չկրցինք առնել... ամէն օր շան քարո՞զ, դա՞ս, նասինա՛թ, ջախ Ջըմըշ... պան գործ չունինք մարդու մէջ նասի՞լ ելլա՛լ խօրաթել կը սորպինք կոր. ամնքիմ մինք հայվան ենք, մարդ չենք տեսեր, լեռը ապրերնք. մարդու առջեւ սանկ նասէ տանկ մի նասիր, սա պիշխմ պերանդ պաց, սա ձևով գոցէ՛, օտքրդ օտքիդ վրայ մի դներ. մատդ քիթդ մի խօթեր, ծանուրդ ծունորդ ինմջէ, կրնաս նէ հիշ մի խօնցեր տէ խլլին քըլէ... թուքնի՛լ, հազալ, էսլէմիշ ընել, փանգառլ քըզ կըլէ... թուքնի՛լ, հազալ, էսլէմիշ ընել, փանգառլ ետասախ է եղեր... բօթինը թող մէնկէնի պէս օտքդ սիմէ՛, նասրներուն ցաւէն հոդիդ պերանդ թող կայ, ծան համելու չես չարչրուելու ես եղեր, ջիւնքիւ միսա ֆիրներուն քով բօթին հանելը տակթա ալաֆրանկան խափիրներուն քով բօթին հանելը տակթա ալաֆրանկան խափիրներուն չէ եղեր... ջուրը կուռթ կուռթ խըմելու չէ եղեր, չամելալը սանկ պոնելու է եղեր, ջօրսային վրայ դիշելու չէ եղեր, զէրէ ինչ խըտար պերանդ շատ խայնէ փշելու չէ եղեր, զէրէ անչ խըտար պերանդ կըլլաս եղեր... անսանկ չէ անխըտար բիշէլին ալաֆրանկան կըլլաս եղեր... մինանկ չէ անխըտար բիշէլի համը... մեղայ մեղայ ափին Եւփիմէ... թէզ էֆթիկ համը... մեղայ մեղայ ափին Եւփիմէ... թէզ պիէ մը ունէի ան ալ ալաֆրանկային խուռպան կընաց, պիէ մը ունէի ան ալ ալաֆրանկային խուռպան մը ծառքէս առիք, վախօթով պապատան գալմա ուշախ մը ծառքէս առիք, վախօթով պապատան գալմա ուշախ մը ծառքէ... սուրէ, աստուածավախ, մազլը, խօսուուռուք մը ծանր էր, սաղ աչքը քէօր չէր ամմա չէր տեսնար, մէկ օտքն ալ քիչ մը կէտինը կը քսուէր, ամանիշ չենէ իրարու լեզուէ կը հասկնայինք եւ... մեր մատաման չհաւնեցաւ, գործին չեկաւ ճամբաց տուաւ, հայելար չիյտէ եղեր... տեղը դպրոցէն նոր ելած տիպօմալը արդայ մը պերաւ քի, սպասաւորութիւն ընելու տեղ պատուելիութիւն կընէ կոր. տունին մինձ աղան է եղեր, մեր կնիկը պարոն կը կանչէ կոր. հետը կըուարառ չխօսինէ քիպրիթ մը պիլէ չպերեր. ամս ինչ է, թէմիզ հայերէն կիտէ եղեր, ամա թէմիզ ճուր մը պերել չիյտէ... հէլպէթոտէ... ըսածներս սուտ են... հախ չունիմ մի... հայերէնին թէմիզը աղտօտը կըլլայ, շապիկ է մի չէնէ մի թէմիդրէ... մարդ Աստուծոյ պապանծեր միացեր էք... առաջները պիւթիւն հինաւուրց բարեկամները, ջարշրի աճապանկը կուգային կերթային մեզի. շէնք շնորհք կը նատէինք, կը խօրաթուելինք, սկամպիլ կը խաղայինք, կօնջինայ կը խաղայինք, քիթինէ կը խաղայինք, օթուզ պիր կը խաղայինք, վախիթ էր կամցնէր, սու մեր Եւփիմէ օլաճախը անանկ հիյէթ մը ըրաւ, անսանկ թէրթիպ մը պըռնեց, անխըտար կըուարառ խօսեցաւ, անխըտար «թիկնաթուին վրայ բազմեցէք որպիթութիւննիդ ինչպէս է, ներողութիւննիդ կը խնդրեմ, բայց մայց՝ դուք մուք՝ սակայն որովհետեւ՝ քանդի՛ սիրելի պարոն, տիկին» ըսաւ քի գալալլըները եաղրլմիշ եղած ենք սրչյան տուռ չալեցինք ըսելով սուքինին կարեցին մեր տունին... հիմակ նայիս նատիսէ հէրիֆներ էն էսթիյարը էսպունը անցուկ չէ, գրալոցէն նոր ելած թափամնը զիւպւէնէր, գալիքաթուրա խըլափէթլի սիւրիւմը հարիթաներ, որը մէնչնտիս է եղեր, որը տօքթօր է եղեր, որը դազէթամն է եղեր, որը ալօքաթ է եղեր, որը միրաս էտի է եղեր, Ամէնքը քով քովի պէրէստէ սըլմաննէ մէջէն չէնք չնորք ջարշըլը մը չելլար... հավուող պիչիմի չարխաններ, խունիի պէս բօթիններ օտուընին, խազըլսի պէս եախաններ, գալք կիտէլիմ պըյլիններ, մօրուքնին ըսես' ջաթալը

կայ, քէփձէն կայ, էլփազէն կայ, ջալը սիւփիւրկէսին կայ, քանթօլոննին ըսես եալսըի պէս մխերնուն փակած, վրանին աճալ աճախիպ հոտեր, մարդուն քիթին դուռը կիցնայ. կլնիկվարի մարդեր, զայիփ զիւյիւփ, ծառվլնին սըխմելու ըլլաս նէ կը վախնաս քի կըտորը ծառքդ պիտի միայ. երկու խալթ ըլլաննէ կիտէսքի ջըթ տէյի բըրթին պիտի. ամմա ի՞նչ է, ուսումնական են եղեր, գոլէն կացած են եղեր, տիբօմա ունին եղեր, ֆրանկարսմա կիտեն եղեր, կը կարդան կը գրեն եղեր . . . զար . . . զար . . . զարմացեալ են եղեր . . . մեղայ մեղայ զարգացեալ . . . անանկ չէ . . . նայէ ձուղաղ կուտա՞ք, պապանծումն Զաքարիայի էք եղեր, չը խօսիք նայինք . . . վայ շունչանորդիներ վայ . . . մենք ալ էշու պէս շան քարոզ կը կարդանք կոր երկու սաաթ է. մեղք նէֆէսիս պէ, ճօշմիշ ալ եղեր էի, էբէյի ալ աղէկ խօսեցայ մեղք . . .

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐԹԻՆ — ԵԽԻՔԻՄԻ

Եւփ. — Բանախօսութիւննիդ լմնցա՞ւ . . . կրնանք մտնել:

Արք. — Նասր՞լ գործիդ չեկած պաները մտիկ չես ըներ հէ. հոռ ըլլայիրտէ մտիկ ընէիր, նասրլ ալաֆրանկայիդ խերը անիծեցի . . .

Եւփ. — Դուն ո՛վ, ալաֆրանկան բերանը առնողը ով . . .

Արք. — Պերանս չէ օտքիս տակը պիլէ կառնեմ:

Եւփ. — Աման չարշըլը դուն ալ, արդէն խենթը ես եմ որ պարապ տեղը շունչ կը հատցնեմ, մեղք որ ինծի պէս զարգած կին մը ունիս և ատանկ անձունի գաղափարներու կը ծառայես:

Արք. — Ծառայ ե՞մ մի . . . էյ թա համ բայլաջօ էլնք չէր օդտեր կոր հիմա ալ ուշախ եղանք . . . չնորհակալ եմ . . .

Եւփ. — Չ'հասկցար կեցիր բացատրեմ . . . բանի մը, գաղափարի մը ծառայել հայերէն կը նշանակէ . . . սա ինչպէս ըսեմ . . . օրինակի համար :

Արք. — Զըսես նէ ալ կըլլայ դաս տալու մ'ելլար կինէ . . .

Եւփ. — Այսինքն երբոր սա . . . հիմայ նայէ . . . ենթաղրենք թէ ըսել կուզես որ . . . աման ես ալ ի՞նչ եմ եղեր, խելքո գլուխս չէ, բոլոր գիտցածս փախաւ . . . կեցիր պարոն Սիսակը կանչեմ բացատրէ քեզի: (զանդակէ էը հնէցնէ)

Արք. — Ոտքըդ պագնեմ ինչ կընես կոր, վազ անցանք:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ — ՍԻՍԱԿ

Սիս. — (Խոնարհութեամբ) ի՞նչ կը հրամայեն իմ տէրս և տիկնս:

Արք. — Ի՞նչ խալթ կ'ուտէ կոր պէ . . . գարցատա օրթաք չըդառը . . . կըուտառին խալթերը համար ան ալ կըլլելու է . . .

Եւփ. — Պ. Սիսակ, միւսիւ Բասքալին բացատրեցէք թէ ծառայել ի՞նչ կը նշանակէ:

Սիս. — Ծառայել, ներգործական կանոնաւոր բայ, առաջին լծորդութիւն, սահմանական ներկայ . . . կը ծառայեմ (Լայլն) անկատար կը ծառայեի (Լայլն):

Արք. — Սուս եղիր պէ, հասկցնաք ամեւքս ալ ծառայ ենք, ես ալ ծառայ եմ. դուն ալ ծառայ ես, ան ալ ծառայ է. եկուր նայէ քի օրթան գործ տեմող չիկայ. ու՞ր է քու ծառայելդ. նայէ՛ կետինը խառըշ մը թօզ կայ, ասոնք թէմիզցու քի ծառայելդ. հասկնամ, ափ կընես ասդամ ալ ես քեզի տուած ըլլամ . . . հիմակ ձգենք սա պօչ լախըռաքները, ցորեկին ի՞նչ պիտի ուտենք ըսէ նայինք:

Սիս. — Այս ցերեկ պիտի ուտէք՛, տապկած գանհանաւոկ, հորթի միսոլ արգանակ, կանկառի կոխածոյ և տանձանուշ: (Դուրս կ'եւլու)

Արք. — (Բերանէ որբելու պէս ընկելով) Եւ վառք յուժանա յասկանից ամէն . . . ծօ մենք աս խրար կըուարառ կերակուր ուտելու ըլլանք նէ վարդապետ կըլլանք ծօ վարդապետ . . . սըլմոց հայելալը քիչ մը հիմէթ ընէիր, Սատուածդ սիրես սըկէ պան մը հասկցար նէ ինծի ալ ըսէ:

Եւփ . — Աստուած իմ ի՞նչ գլուխ , կարդուելէս ի վեր հայերէն
կը խօսիմ , դեռ բառ մը չ'սորվեցաւ . . . ինձի նայէ Սրթին
աղա . . .

Արք . — Փառք քեզ տէր հէլէ ով ըլլալս հասկցայ :

Եւփ . — Իրաւ բան մը չ'հասկցար Սիսակին ըստաներէն . . . վա-
հանաձուկը չ'իստե՞ս ի՞նչ է . . .

Արք . — Վահանը աղբօրս տղան է , պոչի ճուկը ի՞նչ է . . .

Եւփ . — Սա դուք ուր է խալխան կըսէք նէ . . .

Արք . — Աս մէկ . . . սա ետևէն օրթի միսով Արմենակ էր ի՞նչ
էր . . .

Եւփ . — Օրթ չէ՛ հորթ է , արմենակ չէ արդանակ է . . .

Արք . — Եյ հիմայ հասկցայ իշթէ :

Եւփ . — Սյանքն տանացի միսով . . . ո՞հ ի՞նչ կոշտ բառ . . .
իսաշամաւ :

Արք . — Հա չէօյլէ . . .

Եւփ . — Եյ կանկանի կոխածոն ալ չ'հասկցար . . .

Արք . — Է անիկա քիչ մը ջախմիշ ըրի . կանկ' . իշթէ կըլսին
չմն ըսեր , խուզիի կըլուս ըլլալու է . ամա կոխածոն շա-
նթմիշ կընէ կոր :

Եւփ . — (ի՞նդապան) էնկինառի պաստը է :

Արք . — Հեյ կիտի զավալլը էնկինառ պաստըսի հեյ , աս ի՞նչ
իրյափէթի խոթեր են քեզի . . . էյ սա ծարինը ի՞նչ էր . . .

Եւփ . — Արժուտի քօրոսթօ . . .

Արք . — Հա՛ տեսար մի եա , խալխանի թալա՛ , էնկինառ պաս-
տըսի , խաշամա՛ , արմուտի քօմքօմթօ , իշթէ ասոնք իշ-
թահ պացող պաներ են , չ'ըլլար պէ չ'ըլլար , ատանկ վա-
հանի ծուկ' Արմենակ Հայկանուշ ֆիլան ֆալան տէյի պա-
ներ մը ուտեմ նէ սինմիշ չըլլար , պօղազս կը կենայ կոր
վէսսէլամ :

Եւփ . — Ասոնք պարապ խօսքեր են , քիշ մ'ալ լուրջ բաներու-
դրայ խօսինք , գիտես այսօր հիւր մը պիտի ունենանք :

Արք . — Կէնէ ո՞վ է . . .

Եւփ . — Սոս եղիր իրյախ մէկը , Բարիզէն նոր եկեր է . տօք-
թօռութեան տիպօմա ունի , շատ ուսումնական' է եղեր ,

կ'ըսեն որ մեծ ապագայ ունի . խըյախ բառթի է իրարու-
ձեռքէ կը քաշեն կոր :

Արք . — Վա՛խ վա՛խ , բարջա բարջա կընեն կոր չ'ըսես :

Եւփ . — Ես մտածեցի որ դուն առւտ հիւանդ ըլլաս , մարդը
կանչել տամ որ մէյմը մենք ալ տեսնանք՝ անւ ալ մեզի
տեսնաց նայինք ի՞նչ կ'ըլլայ :

Արք . — Սուտ հիւանդ մ'ի . . . կերած ապուրը նայէ , վրաս
ուղուրսուղութիւն պիտի պերես , ես իրացունէ հիւանդ
չեմ եղած էօմրիւս մէջը :

Եւփ . — Ի՞նչ վես ունի դեղ չ'պիտի առնես ա . . .

Արք . — Եյ վիզիթան . . . հէքիմը վիզիթա չի պիտի առնէ (Տէ-
կուսէ) ծօ՛ , աղէկ միտքս եկաւ , խալպ մէծիտիյէ մը ունիտ
ան կը քշեմ . . . խալպ հիւանդ նայող տօքթօնին խալպ
մէշիտիյէ կը վայլէ (Ե-դէմէկ'ն) բէք աղէկ ես սուտ հիւանդ
կըլլամ , տօքթօն ալ խապուլ կընեմ ամա , դուն ալ իմին
Ագրիպաս աղաս խապուլ պիտի ընես :

Եւփ . — Ագրիպաս . . . այդ ո՞վ է . . . այդ ի՞նչ պաղ անուն է :

Արք . — Հոգ մի ըներ էլպէթտէ ասոր ալ ալաֆրանկան կը
կանանք աէ քիչ մը կը տաքնայ , բէք չըլլայնէ Քրթիրիոս
կընենք . . . աս մարդը 4-5000 ուկի տէր է , գործը՛ հա-
լը վախթը , քուէտիթօն տեղը , բիյացյան վրայ խրյախ պըռ-
նաւած է , պատուաւոր , աստուածավախս , տունի վեր ,
հար մար պատուող մարդ մըն է . ես աօվկա Վարդուկիս
շատ լայլի տեսած եմ . ասոր տավէթ ըրի պիտի կայ . . .

Եւփ . — Ես անանկ Ագրիպաս անունով , շուկացի , անկիրթ , տ-
նուս , տգէտ . ձաշակ , քաղաքալարութիւն , բարեկրթու-
թիւն , վայելչութիւն , նրբութիւն , փափկութիւն , կենցա-
զագիտութիւն չ'ունեցող մարդու աղջկանս բէշ անդամ
չեմ ցուցներ . . .

Արք . — Ես ալ անանկ Բարիզէն նոր եկած , ծուռքը տիպօմա
ճէպի տէլիք , ջըթ գըռըլլամ , զէվզէկ , զիւպակէ , հարիթա ,
բարս չունեցող , գործ չունեցող , զրէտիթօ չունեցող , ա-
սաւ փախաւ , հիւէճի , խուռտածի , օկզապազ մարդու
աղջկանս քիթը պիլէ չեմ ցուցներ : (Բարիզէն լւետին դուռը
կէւլէ)

Եւկ .— Ես ան կերթամ կը համողեմ եա, եթէ ան սուտ հիւանդ չվլայ տօքթոռը չ'ընդունի նէ՝ ես ալ Ագրիպաս աղան առօք փառօք դուռնէն դուրս վոնտել կուտամ Սիսակին (ժամը և էր զարնէ) հիմայ տօքթոռը ուր է նէ կուգայ, երթամ Բասքարը համողեմ. ես ալ քիչ մը զարդարուիմ: (բար իւլի)

ՏԵՍԻ. Ե.

ՍԻՍԱԿ — ԱԳՐԻՊԱՍ

Սիս .— Հրամմեցէք Տիար մտէք . . . ինդրեմ թիկնաթոռը պատուեցէք:

Ագր .— Շնորհակալ եմ, զահմէթ մառնէք, նստեցէք . . .

Սիս .— Հոգ չէ, ոսքի վրայ աւելի հանդիսա կ'ըլլամ, արդէն զրտած եմ:

Ագր .— Հրամանքնիդ գիտէք . . . էյ ինչպէս էք . . . ափ կընէք էֆէնտիս ձեզ չեմ ճանչնար կոր, ինչ կըսուիք:

Սիս .— Սիսակ Կուրեան . . .

Ագր .— Էվէլօք գոհ եմ հրամանքդ ճանչնալուս:

Սիս .— Ներեցէք տիար ստիպուական դործ մը զիս դուրս կը կանչէ թոյլ տուէք որ պահ մը զձեզ առանձին թողում: (է'ելլայ)

Ագր .— (առանձին) Աս ինչ քիպար տէլիսանլը, ինչ ալ նազիքութիւն, աղնուական կերեայ կոր, ո՞վ է աճապա:

ՏԵՍԻ. Զ.

ԱԳՐԻՊԱՍ — ՍԻՍԱԿ — ՇԱՒԱՐԾ

Սիս .— Հրամմեցէք տիար ինդրեմ ներս մտէք . . .

Շաւ .— Շնորհակալ եմ (Ագրիպաս որդի է'ելլի) կ'աղաշեմ անհանդիսա մի ըլլաք նստեցէք, մի յոդնեցունէք ինքինքնիդ կ'աղաչեմ:

Սիս .— Ներեցէք տիարք: (բար իւլի)

Ագր .— Ի՞նչպէս էք էֆէնտիս:

Շաւ .— Շնորհակալ եմ . . . մեր աղէկութիւնը կարեռութիւն չունի, բաւ է որ մեր յաճախորդները լաւ ըլլան:

Ագր .— Հը . . . անանկ է . . .

Շաւ .— Դժբաղդաբար այժմ համաճարակներու շրջանին մէջ կը գտնուինք, թիփօ, վէուլ, ինֆլուէնցա, սքարլաթին որով գլուխ քերելու ժամանակ չունիմ: կը հաւատաք դեռ ձաշած չեմ, առտուն սօն էքսէլանս թորոս պէյէն լուր եկաւ, զացի, դեռ հոն էի ետևս մարդ զրկած էլու. աղնուաչուք կիրակուեան էֆէնտիին կ'ինը անհանդիս է եղեր: հոն զացի, հազիւ թէ դուրս կ'ելլէի, ֆառմասիէն լուր ըերին որ, ֆրանսական ամպասատէն զիս ուղած են. անմիջապէս դեսպանաստուն դացի, անպասատէօխն պրտիկ աղան սքառլաթինէ բռնուեր է եղեր, պէտք եղածը ըրի, դեղարան կ'երթացի երբ դէմս ելաւ պալատական Սայիտ բաշացի թիկնապահը երկձի կառքով մը, զիս կը վնառէ եղեր, անմիջապէս կառքը նստայ ու Պէշքթաշ բաշացին խօնախը գացի, մարը մահամերձ վիճակի մէջ է եղեր, ուրիշ բժիշկներ յուսահատած ձեռք քաշեր են հիւանդէն. ես անմիջապէս էլէքթոօթէուարիք նոր մէթոտով դարձանում մը ըրի, փորին մէջ երեք հատ քար կար, հանեցի կենդանացաւ կինը, բոլորովին ու-աը-տանմէ է. 20 տարի կեանք ասիւռէ կընեմ իրեն. անկէ ալ շիտակ տուն զացի 30-40 հիւանդ կ'ապասէին, այս որ սեսայ սարսափեցայ և ստիպուեցայ փախչիլ, ետևի կողմէն պատուհանէն վար ցատկելով և շիտակ հոս եկայ, որովհետև խօսք տուած էի, ինչ և իցէ ասոնք ուեէ ուարօն չունին այցելութեանս բռնշարժակիթին հետ . . . ձեզմով զբաղլինք (հօդենալով) է ինչպէս էք . . . ինչ կ'զգաք կոր տեսնենք:

Ագր .— Էկածէդ պէրի կըլիսու ցաւ մը կ'զգամ կոր:

Շաւ .— Հօ . . . գէշ նշան է . . . ընսութիւնիդ ի՞նչպէս է . . .

Ագր .— Մեծ համբերութիւն ունիմ:

Շաւ .— կը ներէք չհասկցաք . . . դուրս կելլաք և քանի անգամ:

Ագր .— Կելլամ աւտուները, պազի ալ կիրակի օրերը (մէկուսի)

փախցուց ի՞նչ ըրաւ . . .

Շաւ. — Հսել է օրը անգամ մը :

Ագր. — Է հա ճանըմ :

Շաւ. — Է ի՞նչ տեսակ կելլաք, պինդ թէ կակուղ :

Ագր. — Հէ ի՞նչ ըսիր...

Շաւ. — Սյախնքն պինդ թէ կակուղ դուրս կելլաք...

Ագր. — Պէ ախպար դուրս ելլալուն պինդը կակուղը կ'ըլլայ
մի... դուրս պացածիս պէս դուրս կելլամ:

Շաւ. — Զի հասկցաք դիւրիմացութիւն մը կայ... ևս ձեզի
տունէն դուրս ելլալու խօսքը չեմ ըներ կոր. ինչ և իցէ
ձգենք սա լսադիրը, արդէն շատ կարեոր բան մը չէ... և
լեզունիդ ի՞նչպէս է մաքո՞ւր է:

Ագր. — Մինչև հիմայ թէփ թէմիզ էր ամա, քիչ մը տահա խա-
փա ուռեցունս նէ աղտոտի պիտի ալլահալէմ:

Շաւ. — (Թէկուս) Կերեայ թէ նէռվէօ հիւանդի մը հետ գործ
ունիմ (+աղջրունեամբ) ներեցէք ևս ձեզ էնսիւլթէ ընելու
համար չըսի այդ խօսքը... մի յուզուիք կաղաչեմ, յու-
զումը վնաս է հիւանդին:

Ագր. — Հիւանդը ո՞վ է պէս...

Շաւ. — Դուք...

Ագր. — Ես... վրաս բարի...

Շաւ. — Բայց ներեցէք Արթին աղան դուք չէք որուն համար
կանչուեցայ:

Ագր. — Բաւ լիցի, ինձի Ազրիպաս կըսեն... Արթին աղան իմ
բարեկամս է:

Շաւ. — Ուրեմն մալ անդանտիւ մը եղած է:

Ագր. — Հսել է դուք տօքթօր էք...

Շաւ. — Այո՛... պատիւ ունիմ ինքզինքս ձեզ ներկայացնե-
լու... տօքթօր Շաւարչ, առ լա ֆաքիւլթէ առ մէտրսին
առ Բարի, էքս էնթէոն առ Լօբիթալ առ լա շառիթէ, ձերդ
մնապատութեան ծառայելու պատրաստ:

Ագր. — Շնորհակալ եմ, բայց ես հիւանդ չեմ...

Շաւ. — Ահաւասիկ հոտ է արդէն շատ մը մարդոց գործած աննե-
րի ի սխալ... սիրելի պարան, գիտէք որ սկզբունքով
առողջ մարդ չիկոյ աշխարհիս վրայ... ով որ առողջ է

հիւանդ եղած է ատենօք, և եթէ եղած չէ՝ պիտի ըլլայ
ապագային, և նոյն իսկ այդ առողջ վիճակին մէջ չի կրո-
նար առողջ հարութիւն, քանի որ ենթակայ է հիւանդա-
նալու, արդէն ինքզինքը առողջ կարծելը տեսակ մը հի-
ւանդութիւն է որ մամաւոր դարմանումի կը կարօտի, հի-
ւանդութիւն որ շատ ծանր հատեանքներ կրնայ ունենալ,
որովհետեւ մարդ ինքզինքը առողջ կարծելով պէտք եղած
իմիէնիք միջոցները ձեռք չ'առներ և այդպէսով ինք իր
ձեռքով կը փորէ գերեզ բանը... այո, առողջ մարդ չիկայ
աշխարհիս մէջ. հիմա տեսէք, օրինակի համար, դուք որ
կը կարծէք թէ որ և է տկարութիւն չունիք այս վայր-
կեանիս, սակայն պղտիկ ամենաթեթև տենդ մը ունիք...

Ագր. — Տենդը ի՞նչ է...

Շաւ. — Տաքութիւն... ֆիէվուը:

Ագր. — Ի՞նչ տաքութիւն, Աստուած սիրես նէ:

Շաւ. — Շատ թեթև բան մ'է, շատ թեթև... դուք չէք զգար,
բայց բժիշկին աչքէն չի վրխալիր, այո՛, վնասակար բան
մը չէ, բայց ո՞վ կ'ապահովէ որ ժամէ մը վերջը չպիտի
սասականայ, երեք չորս ժամէն զքեզ անկողին չպիտի ձգէ
թէ վաղը առտու թիֆօ չիպիտի ըլլաք և քանի մը շաբա-
թէն կատաղութեան և զատանձանքի մէջ չի պիտի վայր-
ճանիք:

Ագր. — (Պողոսական ներկայ ու գլուխը կը լի՞՛) Աման, կիտէս քի
իրաւոնէ տաքութեան պէս պան մը կայ վրաս... աման
տօքթօռ ինձի աղէկ մը մուտքէնէ ընէիր... (+անունիւն,
բայլոն կը հանէ)

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ—ԱՐԹԻՆ ԱՂԱ—ԵՒՓԻՄԻ—ՈՅԶ—ՄԻՍԱԿ.
(Ե-կիմէ և Ականի Արթին աղյուսին լուերէն հարած էն)

Շաւ. — Օ՛, ներեցէք, տիարք, տիկնայք...

Ագր. — (Վարարած կոկոր հագուստէն կոճիւնէն) Ականի վաղէլակ
կ'ողէլ բայլոն բայլոնէ) Ի՞նչ կըսեր է փէնստիս հիջ կը վայլէ
մի... չըլլար նէ:

Սիս. — Իմդրեմ թուլ տուէք մեր պարտքն է :

Արք. — Բարե Ազգիպաս աղա անցած ըլլայ . ի՞նչ է ան , տո՞ւն ալ իմ տառօսիս եկար :

Ագր. — Ի՞նչ կիստնամ ախաղար , շէնք չնորհք նստէր էի , միւսին եկաւ , թախըմ մը լախըրտներ ըսաւ , սաղ ճարդ չիկաց ըսաւ , դուն տաքութիւն ունիս , թիֆո պիտի ըլլաս ըսաւ , փէսփէսէն իս առաւ , ինքովնքս նայել կուտայի կոր դուք վրայ հասաք . . . հէմէն հէմէն կիսենքի ալ բէք աօչ խօսք չէ տօքթօրին ըսածը :

Արք. — Իմ կլուխս ալ նկաւ ատանկ պան մը . էրէկ թուորի պէս սաղ էինք ասոր հիւրցանք . . .

Շաւ. — (Ղորհալի ջեռվ ճը տիկինին) Արդեօք տիկին կերպասս ևանի՞ հետ պատիւ ունիմ խօսելու . . . և օրիորդն ալ իր դուստրն է :

Եւփ. — Այս' տօքթէու :

Շաւ. — (Էնդինիւլ նէրհյացնէլով) Տօքթէու Շա՛ւարչ . աը լա քաքիւլթէ աը մէտրսին աը Բառի , էքս էնթէռն աը լութիթալ աը լա շառիթէ , ձեր խոնարհ ծառան . . . ներեցէք տիկին , կարծեմ քանի մը վայրկեան ուշ մնացի բայց կամքէս անկախ պատճառներով . դժբաղդաբար հիմայ համաճարակներու շրջանին մէջ ենք : Թիֆօ' , սքառլաթի՞ն , ըլթիթ վէռօլ , էֆլոէնցա' , որով գլուխ քերելու ժամանակ չունիմ . կը հաւատա՞ք դեռ ճաշած չեմ . առառուն՝ սօն էքսէլանս թորոս պէէխն լուր նկաւ , գացի , դեռ հոն էի , ետքեւէս մարդ դրկած էին . ազնուաշուք Կիրակոսեան էֆին կիմը անհանգիստ է եղեր , հոն գացի . հաղիւ թէ դուրս կելէի , ֆարմասիէն լուր բերին որ ֆրանսական ամպասատէն թէլէֆոնէ ըրեր են որ ամիջապէս դեսպանատուն երթամ , գաց'ի , ամպասատէուին պղտիկ տղան սքարլաթինէ բանուեր է եղեր , պէտք եղածը ըրի , դեղարան կերթացի երբ դէմա եղաւ պալատական Սայիտ բաշային թիկնապահը երկծի կառքով , զիս կը փնտոէ կոր եղեր , անիջապէս կառք նստայ՝ Պէտիկթաշ՝ բաշային խօնախօք գացի , մայրը մահամերձ վիճակի մէջ է եղեր , ուրիշ բժիշկներ յուստահա-

տած ձեռք քաշեր են հիւանդէն . ևս անմիջապէս էլէքթրօսմաննէթիք նոր մէթուով դարմանում մը ըրի , փորին մէջէն երեք հաս քարի կոր հանեցի , կենդանացաւ կինը , ըոլորովին որ աը տանժէ . քսան տարի կեանք ասիւուէ կ'ըներ իրեն . հոնկէ ելայ շիտակ տուն գացի . 30-40 հիւանդ կսպասէին կոր . այս որ տեսայ սարսափեցաց և սիփուեցաց փախչել ետևի կողմի պատուհանէն վար ցատկելով և շիտակ հոս եկայ որովհետեւ խօսք տուեր էի . ինչ և իցէ ասոնք ո և է ռաբու չունին այցելութեանս բուն շարժառիթին հետ . . . մեր հիւանդովը զբաղինք եթէ կուշէք . . .

Արք. — (Ո. Դրէսանէն) Ախաղար ստհաթ մըն է ի՞նչ կը պատմէ կոր աս կէվզէն :

Ագր. — Մէնք աշկիայ պիւթիւն մտիկ ըրինք տէ՝ սօնը սօնը թիֆօս օրթան ելաւ . մութլախս քու կըլօխդ ալ զուլու պան մը բաթլամիշ պիտի ըլլայ :

Արք. — Վարդուկ'կ , քովս եկուր նայիս , քեղի ճանչյունեմ : (Ոօզ կը ճօվէնաց)

Ագր. — Մատամաղէլ ձեր հրամանքին դովեստը շատ տեղերէ լսած եմ , ասօր ձեզ տեսնելու նայիլ ըլլալուս էվէլօք գո՞նիացի :

Խօզ. — Ան ձեր աղնուութիւնն է :

Եւփ. — Ռո՛զ , քովս չիդա՞ս , տօքթէօրին հետ տեսնուիս :

Ագր. — Ռոզը ի՞նչ է . . .

Արք. — Հիջ ճանըմ , Ռոզ Վարդուկին ալափրանկան է , չիյտէս կոր պէ . . . քրանսազճա Ռոզ կըսեն Վարդուկին , իմ անունս ալ Բասքալ է հոս դիոցած ըլլաս :

Ագր. — Ատ ի՞նչ թօնափ պան է պէ . . .

Արք. — Տահա շատ թօնափ պաներ պիտի տեսնաս դուն , քիչ մըն ալ կինսա նէ քու Ազգիպաս անունդ ալ աճալ աճաւ յիպ հիւթիթ մը կառնէք քի , գուն ալ չես ճանչնար :

Շաւ. — (Դամացոյցը նայիլով) Ներեցէք , հիւանդներս կ'սպասեն . կը ցուիմ որ շատ չպիտի կընամ վաշելի ձեր քաղցր տեսութիւնը . . . տիկին . . . արդեօք կընա՞մ հիւանդը քննել :



Եւփ .— Հասպա՛ հասպա՛ . . .
 Շաւ .— (Ուրեմն աղջոյի հադեւալը) Լեզունիդ կը հանէք . . .
 Արք .— Լեզուս մի՞ . . . (ինչ էրեւ) Հա՛ իրու հիւանդ եմ, մոռ
 ցեր էի (վեղան կը հանէ). Շաւարշ իւ ունէ :

Շաւ .— Կիշերը լու կը քննանք . . .
 Արք .— Կնիկս շատ ալբալու զնինէ՝ կը քննանամ:
 Շաւ .— Ախորժակնիդ ի՞նչպէս է :
 Արք .— Կըուարար կերակուր չըլայնէ մեր աւագերէցին չափ
 կուտեմ :

Եւփ .— (յանդէմանաբանը) Բասքա՛լ . . .
 Շաւ .— Ես սանկ ատեն ատեն մէջքերնիդ ասեղ խօթելու պէտ-
 բարակ ցաւ մը կզգաք . . . փոքրիկ բիբիւռ մը . . . (իւ ունէ)
 իմ ասկցայ . . . տեսէք ես ուրիշ բժիշկներու չեմ նմանիր,
 հա՛ հասկցայ . . . տեսէք ես ուրիշ բժիշկներու չեմ նմանիր,
 իմ մէթոսս է նախ հիւանդութիւնը ճանչալ, յետոյ զայն
 ճանչանել հիւանդին, որպէս զի գիտնայ իւր սեփականու-
 ծանչցնել հիւանդին, լըստ այնմ վարուի հետը . . . ներողամիտ կերպով՝
 թիւնը և ըստ այնմ վարուի հետը . . . ներողամիտ կերպով՝
 եթէ հիւանդութիւնը թիւնը է, խիստ կերպով, եթէ ծանր
 է . . . ուրիմն իմ մէթոսս հաւատարիմ, հրապարակաւ կը
 յայտարարեմ որ, պարոնին հիւանդութիւնը աբանտիստ է :
 Արք .— Աբանտիս մի՞ . . . ասոր ալաթուրքա անունը չիկա՞յ տօք-
 թոռ :

Շաւ .— Ոչ սիրելի տիար, աբանտիսիտը ալաֆրանկա հիւան-
 դութիւն մըն է :

Ագր .— Ծանր հիւանդութիւն է . . .

Շաւ .— (լուրջ) Այո՛ . . .

Եւփ .— (ուրախութեալը) Ալաֆրանկա հիւանդութիւն մը . . .
 ի՞նչ բաղդ, ի՞նչ փառք, տէր Աստուած . . .

Շաւ .— Այո՛, զուտ ալաֆրանկա հիւանդութիւն մը, նորելուկ,
 քէն տը սիէքլ, չիք, աղնուապետական հիւանդութիւն
 մը, որ քիչերու վիճակուած է. ընդհանրապէս նշանաւոր
 անձերու, բարձր աղնուականներու, արքայական գերդաս-
 տանի անդամոց կը հանդիպի այս հիւանդութիւնը, ու
 հանդիպածը կառնէ կը տանի մեծ մասամբ . . . կը շնորհա-
 ւորեմ ձեր հիւանդութիւնը միւսիւ Բասքալ . . . Պօլիս գա-

լէս ի վերայնչափ հիւանդ եմ, գեռ առաջին ան-
 գամն է որ աբանտիսիթի պարագայի մը հանդիպեցայ . . .
 շնորհաւորութիւններս տիկին, պարոն և օրիորդ (Վէճիւաննա)
 անպատճառ աղնուական ծագում մը ունենալու էք միւ-
 սիւ Բասքալ . . .

Արք .— Ես հա՛ աղնուական կը սեպուիմ. տէտէս Սամաթիայի
 խօվուշին րէցիզն էր . . . քուլաղը քէսիք մէկթիք տէցի նամ
 տուած էր :

Եւփ .— (աղլազոյի հը արձակելով) Բասքա՛լ . . . (Ուզոյին գովը
 էրլուայ) ա՞չ ջիղերս բանեց . . . հոտիս սրուակը բեր, մոող :

Շաւ .— (ուկը էրլուալը) Արդէն ներս մտած վայրկեանէս գու-
 շակած էի, ձեր գոյնին չի հաւանեցայ, գուք ալ բան մը
 ունիք, այո՛, տիկին :

Արք .— Ես ունենալէս ետքը, ան հայտէ հայտէ . . . մութլախսա
 անորն ալ աղնուական հիւանդութիւն ըլլալու է, զիրա
 անիկայ ալ սէրկիճի քէլ Համբիկին աղջիկն է :

Եւփ .— (աղլազոյի կը մարի :

Միս .— (վաղլուալը) Իլիմօն, էթէր, ջուր, տիկինը կը մարի կոր.
 տիկինը մարեցաւ (աղլուակ հը վրայ էկա՞յա :

Շաւ .— Դող մելլաք, ես հոս եմ . . .

ՎԱՐԱԳՈՅՐ



Բ. ԱՐԱՐՈՒԱԾ

ՇՆԴԱԾԱՐՈՒՄԸ

Բաւական մեծկակ սալօն մը, աշ կողմը պղտիկ բեմ մը,
բառավան մը կայ, արուներ, թիկնաբոռ եւայն :

ՏԵՍԻ Ա.

ԵԽՓԻՄԵ — Ա.0.Զ

Եւփ .— Ինձի նայէ աղջիկս, իմ որոշումս որոշում է, գուն
հօրդ խօսքերուն ականջ մի կախեր, ես աօքթէու Շաւար-
շը ընտրած եմ քեզի ամուսին, աղջիկս, այս տեսակ ա-
մուսնական խնդիրներու մէջ կիները էրիկ մարդոցմէ աւե-
լի ձեռնահաս են, մնչք աւելի հեռուն կը տեսնանք, անոնց-
մէ աղէլ կը ճանչնանք մարդուն գէշն ու աղէկը... հօրդ
առաջարկած բառթին, ատ Ազրիպաս աղայէ ինչ է, քեզի
համար բոլորովին անյարմար է :

Ոօզ .— Այս՛, մայր ես ալ այնպէս կը կարծեմ,

Եւփ .— Կեցցես խելացի աղջիկս, այդ ամուսնութիւնը յղի է
ապագայ մեծ դժբաղդութիւններով և վստահ եմ որ քիչ
ատենէն իրար կը ձգէք, եթէ թող տալու ըլլամ որ իրար
առնէք :

Ոօզ .— Ահ, մայր իմ, հայրս համոզեցէք որ ետ կենայ այդ գա-
ղափարէն, ետևէս ինկեր է գիշեր ցերեկ...

Եւփ .— Դուն հոգդ մըներ, քանի որ ես ողջ եմ Ազրիպաս
աղան չը կինար Եւփիմէին աղջիկը առնել... տէր Աստուած
կարելի բան է այդչափ անուս, տղէտ...

Ոօզ .— Կոշտ...

Եւփ .— Խաւարեալ:

Ոօզ .— Անբարեկիրթ :

Եւփ .— Անձաշակ :

Ոօզ .— Տղեղ :

Եւփ .— Ֆէս դնող... պառկած քոլալը օձիքով :

Ոօզ .— Խոշոր քիթով :

— 21 —

Եւփ .— Ես ատանկ մարդու աղջիկ մի կուտամ:

Ոօզ .— Ես ատանկ մարդ կրինամ առնել:

Եւփ .— Հոգդ մի լներ աղջիկս մայրդ հոս կեցեր է:

Ոօզ .— Աղէկ, բայց հայրս ալ անդին կեցեր է...

Եւփ .— Մի վախնար... բայց նայէ տօքթօր Շաւարշը, ամէն
կողմանէ քեզի յարմար ամուսին մըն է...

Ոօզ .— Հը... այո՛...

Եւփ .— Ուսումնական, համալսարանական, զարգոցած, զիտուն
բարեկիրթ, վայելուչ... բայց ինչո՞ւ լուռ կեցեր ես.

Ոօզ .— Ինչ խօսիմ դուն կըսես կոր:

Եւփ .— Վերջապէս տօքթէու Շաւարշը քեզի համար մէկ հա-
տիկ կատարեալ տիպար փեսացուն է:

Ոօզ .— Հը... այո՛...

Եւփ .— Ինչ է ան, շատ համոզուած չես երեար կոր, միթէ
տօքթէու Շաւարշը չի գոհացներ բոլոր ճաշակներդ:

Ոօզ .— Սիրելի մայր իմ, խնդիրը իմ հաւանութեանս վրայ չէ,
ես իմ ծնողացս հնազանդ աղջիկ մ'եմ, հայրս համոզելու է
չես դիտեր որչափ հակառակ է տօքթէու Շաւարշին:

Եւփ .— Ապերախտը..., իրեն արանտիստի պէս սքանչելի հի-
ւանդութիւն մը գտած ըլլալուն համար կերևայ թէ...
բայց անոր հակառակութիւնը կարեսրութիւն չունի, գուն
ինձի ձգէ այդ գործը, և դուն պէտք է ինձի հնազանդիս,
դիտե՞ս...

Ոօզ .— Բայց չեմ կրնար ալ ուղղակի հօրս դէմ ապստամբիլ,
նայէ սիրելի մայր իմ դուն համոզէ զայն եթէ կրնաս. հա-
մաձայնիցէք իրարու հետ, ես ալ այն ատեն պատրաստ եմ
ձեր որոշած մարդը առնելու:

Եւփ .— Լաւ լաւ, այդ գործը կը կարգադրենք, հիմայ ես եր-
թամ նայիմ թէ ամէն բան կարգին է. տեսնեմ Սիրակը
պէտք եղած պատրաստութիւնը ըրած է այս թատերական
սուարէին առթիւ... մեր բարեկամները ուր որ են նէ
կուգան... հա, սիրելի Խօզոս, մամնաւորապէս կը յանձնա-
րարեմ քեզի տօքթէօր Շաւարշը, միւս անդամուան պէս
պալութեամբ մի վարուիր հետը, կիշկիր եղիր քիչ մը,
չե՞ս տեսնար կոր ինք ինչ տաքարիւն մարդ է (Պուրու կէլլէ)

ՏԵՍԻԼ Բ.

Ոօզ. — (Հայոց հայութեան) թող մայրս կարծէ որ տօքթէօր Շաւարշին պէս զէվզէկ մը պիտի առնեմ, հայրս ալ կարծէ որ Ագրիպաս աղային պէս կոչտ ու խըմալը մէկը պիտի առնեմ... դուք ան միտքին վրայ եղէք, ես իմ ամուսինս որոշած եմ, ինդիրը մինակ ժամանակ շահելուն վրայ է, մինչեւ որ Տիգրանը...

ՏԵՍԻԼ Գ.

ՈՒԶ — ԱՐԹԻՆ ԱՂԱ

Արք. — Հա Վարդուկ հսո ես եղեր, ես ալ քեզի կը փնտուէի կոր, իսօնելիք ունիմ:

Ոօզ. — Մտիկ կընեմ կոր:

Արք. — Ինձի նայէ աղջիկս, ան տօքթօռ Շաւարշը մէյ մը միտքէդ հանէ, մօրդ խօսքերուն անկած մի կախեր, աս տեսակ գործերու կմիկներուն խելքը չի հասնիր, իլլէ մօրդ խելքը հիշ չը հասնիր. ես քառասուն տարի է չարշին մարդու հետ կիյնամ կելամ կոր, ալ ինսան սարափի եղանք, սանկ մէյ մը աչքով վերէն վար թարթմիշ ընելու ըլլանք նէ մարդուն պօշը տոլուն, հաֆիփը ծանրը, փարալըն փարասզը, խելացին իլէ հարիթան պիւթիւն կը հասկնանք. ան տօքթօռ Շաւարշին՝ իլք տեսած օրէս ի վեր չհաւնեցայ:

Ոօզ. — Ես ալ հաւնած չեմ, հայրիկ, բայց ինչ ընեմ, դուն մայրը համոզէ որ ես կենայ այդ գաղափարէն:

Արք. — Հոգդ մըներ դուն աղջիկս, քանի քի ես հսո կեցեր եմ, տօքթօռ Շաւարշին պէս զէվզէկ հարիթա... ալտփրանկա սուրաթլը մարդու աղջիկ չեմ իտար...

Ոօզ. — Ես անանկ իմաստակ, թեթևոլիկ մարդ չեմ կընար առնել:

Արք. — Աֆէրիմ աղջիկս, դուն հոգդ մի ըներ:

Ոօզ. — Հոգս չընեմ հայր, բայց մայրս ետեսս է ինկեր. անպատճառ կուզէ կոր որ խօսք տամ, դուն մայրս համոզէ ես արդէն համոզուած եմ:

Արք. — Աս գործը ինձի ձգէ դուն, ես եմ առ տունին մէջը էմք ընողը, դուն իմին ետեսս եկուր... գանք հիմայ Ագրի-

պաս աղային, տեսա՞ր մի պատուական փեսացուն, վայլուն մարդը, պատուաւոր թիւճճար, հալլ վախթը տեղը, բիացային վրայ 3-4 հազար օսկի քուէտիթօյի տէր, քիպար, քիթը պերանը չէնք չնորք... ծան չես հաներ կոր... ի՞նչ է ան... չենէ Ագրիպաս աղան քիթիդ չես տանիր:

Ոօզ. — Սիրելի հայրս, ինդիրը իմ հաւնելուս չհաւնելուս վըրայ չէ, մայրս համոզելու է. մայրս կըսէ կոր որ անիկա առնելու ըլլաս նէ քեզի բէտա կընեմ.

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ — ԵՒՓԻՄԵ

Եւփ. — (Տառեւլով) Ի՞նչ է ան, ի՞նչ կայ նորէն, դարձեալ աղջկանս խելքը կը դարձնէ՞ս կոր...

Արք. — Քու դարձուցածդ տեղը կը դնեմ կոր... (Ոօզ ԴՊՐԱ կելլէ:)

Եւփ. — Ինձի նայէ մէյ մըն ալ տա Սգրիպասին խօսքը չպիտի ըլլայ աս տունին մէջ:

Արք. — Ի՞նչ ըսել է խօսքը չպիտի ըլլայ, մեր փեսացուն է նէ: խօսքն ալ պիտի ըլլայ, հարսնիքն ալ պիտի ըլլայ:

Եւփ. — Մեր փեսացուն տօքթէօռ Շաւարշն է:

Արք. — Մեր փեսացուն Ագրիպասն է:

Եւփ. — Չէ Շաւարշն է...

Արք. — Ագրիպասն է...

Եւփ. — Շաւարշն է...

Արք. — Ագրիպասն է...

Եւփ. — Ինձի նայէ, աղջիկ զաւակը մօրը կը վերաբերի, դուն չես կրնար խառնուիլ:

Արք. — Անանկ է եա, ճէնէզը շնողը, դրախոման տուողը դուն ես:

Եւփ. — Պարապ խօսք չեմ ուզեր, Ագրիպասն մեր փեսացուն ըլ-պի-տի ըլ-լայ, հասկցա՞ր... Սգրիպասը ծառայի տեղ անդամ չեմ առներ:

Արք. — Ան քու չհաւնած Ագրիպասն տօք. Շաւարշին պէս քսան հատը ճէպէն կը հանէ:

Եւփ. — Աման տգէտի խօսք մըներ . տօքթէոռ Շաւարշին պէս
վարպետ բժիշկ հատ մալ չիկայ Պօլսոց մէջ :

Արք. — Վարպետ բժիշկ մի . . . նայինք չէնք չնորհք սիւլիւք
մը փակցնելու ճամբան կիտէ . . .

Եւփ. — Զլմեցի՞ր, Սայիտ բաշային փորէն երեք հատ քար հա-
ներ է :

Արք. — Հա իրաւ է . . . հէմ կիտես ի՞նչ ըրեր են ատ քարե-
րը . . .

Եւփ. — Ի՞նչ . . .

Արք. — Չիմայցի՞ր . . . երկուքը տէյիրմէն թաշի ըրեր են, մէկն
ալ Սուլթան համամին կէօպէք թաշին ճաթեր է եղեր,
անոր տեղը դրեր են . . . վայ քեզ քաղաք որ թագաւորդ
մանուկ է . ան ըստ դուն ալ հաւտացիր . . . անիկա մար-
դու փորէն քար չէ, մեզի պէս խախաներուն ճէպէն ան-
ձախ բարա հանել գիտէ :

Եւփ. — Անիկա զարգացած, ուսումնական մարդ է, սուտ չը
խօսիր, ձեզի պէս չարշըլ չէ քի տասը սուտը մէկ փա-
րացի ընէ . . . բերանդ լոււա ու այնպէս խօսէ տօքթօռ Շա-
ւարշին վրայ, ապերախտ . . . ան շըլլար նէ դուն ո՞ւր տե-
ղէն արանտիստի պէս չնորհքով, ազնուական հիւանդու-
թեան մը տէր պիտի ըլլացիր :

Արք. — Աս ալ կլեցի՞ր . . . ի՞նչ հիւանդութիւն, ի՞նչ եարան-
տիսի ի՞նչ արանսըզի . . . հէմ ինծի նայէ ասոնք պօշ խօս-
քեր են. տօքթ. Շաւարշը Վարդուկին էրիկը չկրնար ըլ-
լալ, հէմ ալ չպիտի ըլլայ . . . կրցի՞նք հասկյնե :

Եւփ. — Ինչ և իցէ, վերջէն կը խօսինք այս նիւթին վրայ . . .
հիմայ հիւրերը պիտի գան, գնա' շուտով հագուէ . . .

Արք. — Հիւ՞ր մի պիտի գայ . . .

Եւփ. — Այո՛, զարմանալու ի՞նչ կայ . . . չե՞ս գիտեր մեր ընդու-
նելութեան գիշերն է . . . հայտէ, մի տնտնար, գնա հա-
գուստներդ փոխէ, ուրտէնկոթդ հաղիր, լուսթրին կօշիկնե-
րըդ դիր, պըռօյին վրայ բարձր եախս մը դրած եմ ան
առ, չէնք չնորհք ձեփ մը մտիր ու եկուր, անկէ վերջը
քեզի բան մը ըսեմ . . . շատ խօսքի մի խաւնութիր հիւրե-

րուն քովը, այո՛, ո՛չ, այնպէս է, իրաւունք ունիք, ա-
սոնցմէ դուրս մելլար, հասկցա՞ր . . .

Արք. — Ինծի նայէ է քթիք, ինծի աս խցափէթով խապուլ ը-
նես նէ կը նստիմ . . . նէ Զատիկէ է նէ Ծնունդ քի սևու-
աէնկոթս իլէն. լուսթուրին բօթինս հագնիմ:

Եւփ. — Սուտառէ է, սուտառէ, խելքդ գլուխդ ժողլէ :

Արք. — Սուտառէն Զատիկէն մե՞նծ է պէ . . . զաթէն դալիք
մարդիկները ո՞վ են քի . . . սա զիւպէ ալային չէմի . . .
ըսէ նայինք ո՞վ պիտի գայ . . .

Եւփ. — (ուուուցի՞ն) Նախ պարոն Տիրան Տերևեան, Փետուր
լրագրին խմբազիրը . . .

Արք. — Ծօ՛ սա դալէթաճին, ջէնկէլ պէյըլը խառզա քիթլի
սա ուղուրսուզը . . . քա ան հոս կուգայ նէ մողի զազէ-
թան անցունէ տէյի կուգայ . . . խելքդ գլուխդ բեր . . .
զաթէն սա զազէթաճիներէն փիս միլէթ կայ մի. հառ-
հառութէնէն ուրիշ պան կիտնէն, ասոր անոր միսր խաճնեն,
սա ու ան իրար ձգեն, իրենք ալ մօրուքնին անկէն խըն-
դան . . . էյ տահա ո՞վ պիտի կայ . . .

Եւփ. — Միւսիւ կեռն Դերձակիւն :

Արք. — Ո՞հօ . . . սա ավօքաթը, սա միւզէվիր, սուտ փախստ
քեալըտ խավաֆին . . .

Եւփ. — Պարոն Վահրամ Ահրիկեան :

Արք. — Սա «Եւ ընդ հոգոյդ քում» խաֆալը, այր բէն գիմ սու-
րաթըլը վարժապետը, ամիսը չորս ոսկի ամսական կաւնէ,
քիթին ծարէն ինսողը հազար բարջա կըլլայ :

Եւփ. — (Քարկն-Եւանձն) Ալ հերիք է . . . բերանդ զոցէ . . . հի-
մակ . . . արդէն յանձանքը իմս է որ քեզի նստեր կը խօ-
սիմ կոր . . . հայտէ գնա տեղդ պառկէ, դուն ո՞վ ես, ա-
սանկ մարդոց հետ տեսնուզը ո՞վ . . .

Արք. — Էօլէ ես, էօլէ ես . մենք լայրիս չենք միւսիւներուդ
հետ տեսնուելու, քեզի կը ձգեմ, բարով վայլիս, մինակ
շատ բաթրարը չընէք, չարթննամ հա քունէս, սօնրա ձեր
սուտէյին զիլսուն փորձանք կուգայ . . . (ուուուցի՞ն)

Եւփ. — (աստանցի՞ն) Էօֆ վերջապէս աղատեցանք, իմ ալ ու-

զածս աս էր արդէն, հիւրերուն առջև անանկ պաղ բաներ
կընէ որ վրաս տաք տաք քրտինք կիջնայ: Երթամ սեն-
եակս վերջին նայուածք մը ձգեց թուաէթիս վրայ (Դուրս
կելէ)

ՏԵՍԻ 4.

ՄԻՍԱԿ — ԼԵՒՈՆ

Սիս. — (Հայութելով) Հրամմեցէք, մտէք խնդրեմ . . .

Լեւ. — (Հեռակ առսկէ ճը) Մարդ չէ եկեր դեռ . . . տիկինը և
օրիորդը ուր են . . .

Սիս. — Հիմակ կուգան . . . (Դուրս կելէ)

Լեւ. — Թան միէօ . . . ես ալ արդէն ստիպողական գործեր ու-
նիմ, մինչեւ անոնց գալը ուսումնակրեմ (առսկէն կը բա-
նայ, մէջէն լուղլէր կը հանէ), ալուսուներուն . . . ուղանէն
վրայ, գետենը կը դարրաղնէ, գրեւ մելոն կը հանէ, կակա
նայէւ, գրեւ, գնեւ, լուղլէն մէկը կը Յգէ միւր կառ-
նէ ևայն. ինչնէրէն խօսելով) Այո՛, այս դատը հուգուզի
վերաբերեալ դատ մէ, հետեւաբար թիճարէթի դատարա-
նին իրաւասութենէն դուրս է, այս կէտը պէտք է վեր
հանեմ քօնքլիւզիօններուս մէջ:

ՏԵՍԻ 2.

ՆՈՅՆ — ՇԱԽԱՐԾ — ԳԱԲՆԻԿ

Գառ. — Հրամմեցէք տօքթօռ, ներս մտէք . . .

Շաւ. — Պօնտուռ մէթր . . .

Լեւ. — Բարեւ սիրելի տօքթօռ, նստեցէք խնդրեմ . . . ներեցէք
ուշադրութիւն, դատական վճիռ մը ոսնակոխ կընէք կոր. . .
(Նաւարը հասրելու կը լսոյ) խնդրեմ տակերնիդ բոօթէսթօ
մը կոյ կարծեմ:

Շաւ. — (Ժաղբական) Տիդտօն, մէթր . . . ի՞նչ է ատ . . . պիւ-
ռոնիդ, հո՞ս փոխադրեցիք . . .

Լեւ. — (Լուղլէր ժողվուն) Զէք գիտեր, սիրելի տօքթօռ,
որքան դործ ունիմ. գլուխ քերելու ժամանակ չունիմ:

Շաւ. — Ատ է նէ բան մը չէ, ձեզի հրաշալի դեղ մը կուտամ

անմիջապէս գլուխնուղ քերուըտուքը կանցնի . . .

(Նոյն մէջոցէն Գառանէն նէրս կը մոնէ և որան հօտ կեցած
մանէ կը լսոյ)

Լեւ. — Զգենք գլուխ քերելը, ճաշելու ժամանակ ալ չունիմ . . .
գիտէք առտուընէ ի վեր ամբողջ կերածս ի՞նչ է. հինգ
փարանոց սիմիթ մը, անոր ալ կէսը կրցայ ուռել:

Շաւ. — Զեղի հապ մը տամ, կընաք օրերով ապրիլ առանց
բան մը ուտելու:

Գառ. — (Տէկուսէն) Ես ատ հապը չեմ կրնար կոր կլլեյ . . . ամմա
աղէկ իրար գտան, աստեղէն մէկիր ընենք սա երկու ճամ-
պազներուն մէկ չուանի վրայ խաղալը . . .

Լեւ. — Զեմ կարծեր որ ինծի չափ զբաղած ըլլաք, սիրելի
տօքթօռ . . . տեսէք միմայն առտուընէ ի վեր ըրած գոր-
ծերս թուեմ, պիսի սարսափիք մնաք. ի՞նչ առտուընէ ի
վեր, կէս գիշերէն սկսայ, տօքթէօր, կէս գիշերուընէ . . .
այո՛ . . . երազիս մէջ անազին դատ մը վարեցի. ձեռքս
գտնուող դատերէն մէկը, ժամերով խօսեցայ. հակառա-
կորդիս փաստերը մէկիկ մէկիկ կտոր կտոր ըրի, դատա-
ւորմերը համողեցի, ընդհանուր դատախազին բերանը գո-
ցեցի, վերջապէս ինծի նպաստաւոր վճիռ մը արձակուելու
վրայ էր երր որ արթնցայ . . . այս յուզումէս և յոզնութե-
նէս չնջասպառ, անկողինէս վար ցատկեցի, անցայ գրա-
սեղանիս առջեւ, երեք ու կէս ժամ անընդհատ գրեցի,
ամբողջ Սողոմոն աղային ժառանգական դատին տօսիէն
պատրաստեցի:

Շաւ. — Սողոմոն աղան . . . այս առտու կանուխ ես ալ հոն էի
օրերախօն մը կատարեցի, շատ յաջող անցաւ, վէրքը կարգի
դրի, կարեցի, կարկտեցի, գոցեցի, յետոյ Մարկանան
Յակոր էֆէնտիէն լուր եկած էր . . .

Լեւ. — Յակոր էֆէնտիէն . . . հուգուզի առջեւ այսօր մէկ ամեր-
նակարեւոր դատը անմուեցաւ, քառասուն տարիէ ի վեր
առկախ մնացած դատ մը ունէր, ես երեք ժամուան մէջ
կտրեցի նետեցի:

Գառ. — Կեցցէ պէ՛ . . . ասանկ շառլաթան տօքթօռին ասանկ
կէվեզէ փաստաբան մը պէտք է (Դուրս կելէ)

ԱԵՒ .— Հուգուգէն ելայ շիտակ թիմարէթ մտայ, չորս ժամ ալ հոն դատավարեցի, Մամիկոնեան Սիմոն էֆէնտիին դէմ խնամակալի հանգամանքով, անչոփահաս վարդենիկի ազգականներուն կողմէն բացուած դատը որ...

ՇԱՅ .— Մամիկոնեան Սիմոն էֆէնտին . . . մարդը մեծ վտանգէ մը աղատեցի այս ցերեկ . . . կոնսակին ճիշտ մէջտեղը ուռեցք մը գոյացեր էր. բժիշկները բան մը չէին հասկցեր, ես դացի, տեսայ, հասկցայ, ձեզքոցի մաքրելէս ետքն ալ մէջէն կէս օխայի չափ շաքար դուրս ելաւ. վերջապէս լինցուցի այդ գործը և կոմանեան դեղարանը դացի . . .

ԱԵՒ .— Կոմանեան . . . անոր դէմ սոսկալի դատ մը յանձնուած է ինծի . . . կերեւայ թէ սխալ գեղագիր մը շնուռեր է, որ քիչ մնացեր է մէկու մը մահուանը պատճառ պիտի ըլլայ եղեր: Կոմանեանը կը պնդէ թէ յանցաւորը տօքթօնն է, նոր եկած հայ բժիշկ մը, կերեւայ թէ համբակ մէկը . . . դեռ անունը հաղորդած չէ ինծի . . .

ՇԱՅ .— (Ղփոնած) Այդ ինդիրը ծանօթ է ինծի . . . գեղագործին աշկերտն է յանցաւորը:

ԱԵՒ .— Ինծի հակառակը ճիշտ կերեւայ . . . ես այնպէս համոզուած եմ որ յանցաւորը տօքթօնն է և պէտք է որ խըստօրէն պատժուի, առ նուազն երկու տարի բանտարկութիւն կայ:

ՇԱՅ .— Խնդրեմ, իմդիրը լաւ չքննած վճիռ մի արձակէք:

ԱԵՒ .— (Տէկուսէ) Բայց ինչո՞ւ կը յուղուի կոր . . .

ՏԵՍԻ. Է.

ՆՈՅՆՔ — ԵԼՓԻՄԵ

ԵԼՓ .— Օ՛, տօքթօր, մէթր . . . բարի էք եկեր:

ՇԱՅ .— Բարի տեսանք տիկին:

ԱԵՒ .— Բարի տեսանք:

ԵԼՓ .— Ի՞նչպէս էք նայինք տօքթէօր, մէթր . . .

ՇԱՅ .— Միշտ հիւանդներու հետ, տիկին . . .

ԱԵՒ .— Միշտ դատերու հետ, տիկին . . .

ԵԼՓ .— Ուրեմն միշտ չափազանց զրադա՞ծ էք:

ԱԵՒ .— Օ՛հ . . . այո՛, այո՛ . . .

ՇԱՅ .— Այո՛ այո՛ . . . մէկ հիւանդէն միւսը . . .

ԱԵՒ .— Մէկ դատէն մէկուլը . . .

ՇԱՅ .— Թրանսական հիւանդանոցէն՝ Յունականը . . .

ԱԵՒ .— Հուգուգէն՝ թիմարէթ . . .

ՇԱՅ .— Տունէն՝ դեղարան . . .

ԱԵՒ .— Պիւոյէն՝ դատարան . . .

ՇԱՅ .— Առառնւն օբէռասիօն մը . . .

ԱԵՒ .— Ցերեկը դատավարութիւն մը . . .

ՇԱՅ .— Իշկունը քննափւլժամիօն մը . . .

ԱԵՒ .— Դիշերը քօնքլիւզիօն պատրաստէլ . . .

ՇԱՅ .— Դեղագիր . . .

ԱԵՒ .— Դատավճիռ . . .

ՇԱՅ .— Մէկը սաթլընէն պառկած . . .

ԱԵՒ .— Միւսը մնանկայած . . .

ՇԱՅ .— Որը փորին մէջ ուռեցք մը ունի . . .

ԱԵՒ .— Որը աներոջը դէմ դատ մը ունի . . .

ՇԱՅ .— Վերջապէս չերկնյում, գլուխ . . .

ԱԵՒ .— Քերելու . . .

ՇԱՅ .— Ժամանակ . . .

ԱԵՒ .— Զունիք . . .

ՏԵՍԻ. Ը.

ՆՈՅՆՔ — ՍԻՍԱԿ — ՏԻՐԱՆ — ԱՌՍՏՈՎ — ՎԱՀԱՆ — ԳԱՐՆԻԿ

ԱԽԱ .— (Հէ-ըեւը նէրս հայոնէլով) Հրամմեցէք տիարք:

ՏԻՐ .— (Բարեւեւեւը, խոնարհու-նիւ-նաւը, Ուսուառով նւգիւ-էն նւրկայացնելով) Տիկին և պարոնայք, պատիւ ունիմ Զեզ ներկայացնելու պարոն Աբգար Նիկողայոս Խոստով

Մէլիք տէր Ղազարեանց, Կովկասէն նոր եկած համալսարական մը. Թիֆլիսի զարգացեալ երիտասարդութեան

ամենէն փայլուն ներկայացուցիչներէն . . . տիկին Եւփիմէ, տանտիրուհին, Պոլսոյ Էնտէլիդէնա սալօններուն ամենէն

փայլուն զարդերէն մէկը . . .

Եւփ. — Զափաղանց երջանիկ եմ ձեզի ճանչնալուս։
 Ռու. — Ես էլ նմանապէս . . . միայն տիկին պէտք է ներուժ
 խնդրեմ ձեղանից իմ շորերի մասին . . . հէնց երէկ հասել եմ
 Պոլիս, սև շորերը տակաւին մաքսութիւննեացել, պէտք
 է վաղը գնամ վեր առնեմ . . .

Գառ. — (Քէկու-ուն) Աս պակաս էր . . . ի՞նչ պիչիմ լեզու է պէ,
 ի՞նչ կըսէ կրո . . . Մագսուտին սև շորերը ի՞նչ սիստի ըլ-
 լայ . . . (Դուրը կէլլի)

Շաւ. — Տիկին ձեր աղջիւ ամուսինը ու՞ր է . . . արդեօք հոս չէ՞ . . .
 Եւփ. — Զէ, քիչ մը տկար ըլլալուն իր նմշասենեալին է։
 Շաւ. — Տկա՞ր է . . . ուրեմն քովը երթամ։
 Եւփ. — (Դուրը կէլլի) Զէ, տօքթէօռ անհանդիստ մի ըլլաք,
 բայ մը չէ . . . կարելի է բոլորովին անցած է, հրմայ կու-
 գայ . . . (Ժարդէլով) արդէն, սիրելի տօքթէօռ, կարծե՞մ այս
 իրիկուն բժշկութիւն ընելու եկած չէք . . .

Շաւ. — Անշուշտ . . . բայց և այնպէս . . .

Տիր. — Տիկին, կուզէք որ անմիջապէս մեր ներկայացումովը
 զբաղինք, խօսակցութիւնը վերջի կը ձգենք։

Եւփ. — Ինչու՞ չէ . . . արդէն ես ալ անհամբեր եմ։
 Հիւրերը — Այո՛, այ'ո . . . սկսինք . . .

Տիր. — Ուրեմն բեմը պատրաստենք։
 Եւփ. — Արդէն պատրաստուած է . . .

Տիր. — Խաղիս ոգին անշուշտ լաւ մը ըմբանած էք . . . իս նիւ-
 թըս է համադրական ամփոփ պատկերի մը մէջ մարդկու-
 թեան ներկայացնել արդի ընկերութիւնը մրցակցաբար
 վարող երեք զիսաւոր ուժերը, այն է, արուեստ և գրա-
 կանութիւն, զինուորականութիւն և վաճառականութիւն .
 այսինքն իտէալը, բարին, գեղեցիկը և ծշմարիտը, նիւթա-
 կան բիրտ ուժը և դրամը . . . խտէալը տղնուօրէն պիտի
 ներկայացնէ տիկին Եւփիմէ, զինուորականութիւնը դիւ-
 ցաղնօրէն պարոն Վահան, իսկ վաճառականութիւնը ձեր
 խոնարհ ծառան . . . ոն սկսինք գործի (Դուրականուարները
 կը ծաղուածէն ու բէլ կէլլեն. Հիւրեւն աւ իւ լորուին
 ու իր հոսքին . . .)

Եւփ. — Ո՞հ հոգիին երկնասալաց թուիչքը իրականութեան և
 նիւթին ճախճախուտ տափակութիւններէն դէպի իտէալին
 ձիւնապատ Մասիսները . . .

Հիւր. — Կեցցէ՛ (Ժարդէլով)

Վահ. — (Առ-ըլ Յեւ-ուր լուր կէլլի) Յառաջ, յառաջ դէպի ա-
 րինի և նախճիրի և դիւցաղնութեան նուիրական դաշ-
 տերը . . . ով իմ սիրական սուրս, ազատութեան պողպատ-
 եայ փայլակ, եկուր որ համբուրեմ զքեզ ու թող այս համ-
 բոյրը խօսք կապի օզակ մը ըլլայ մեր ճակատագիրները
 յաւիսնօրէն իրարու նշանող : (Առ-ըլ կը համբուրէ)

Ռոս. — Մէնք որ սրանց հոսհոմներ ենք անուամում, իրաւունք
 ունինք եղել . . .

Տիր. — (Յեւ-ուր կանգուն մը և կոտր մը կոտու բունած) Ահա
 կանգունը և ահա կոտը . . . կոտաւ . . . ով քաղաքակըր-
 թութեան և խաղաղութեան հրեշտակ . . . ով կոտաւ, զքեզ
 արդեօք ով գտաւ . . . քենէ է որ կը շինուին մեր հան-
 գըստաւէտ անկողիններուն սաւանները, և սապագութեան
 գրօշակները, բազմոցներուն երեսը, մեր շապիկները ու
 պատմանքները, մեր հարսանեաց զարդազգեսանները, և
 սուգի հանդերձանքը . . . դուն անհոն ես, անսահման ես
 արարչութեան պէս . . . և զքեզ միայն այս կանգունը կըր-
 նայ չափել (կանգուն վէր առանելով) ով կանգուն, նա-
 խամնամութեան խորհուրդներէն զատ կա՞յ բան մը որ չի
 կարենաս չափել . . .

Վահ. — Կորիր աշքիս առջեէն, ով անարդ գործիք շահու
 և կեղծիքի, որչափ ատեն որ դուն կանգուն մնաս, յու-
 սաբեկ պիտի մնան բոլոր դիւցաղնական խանդերը . . .
 քանի որ առիթը ներկայացաւ, պէտք է որ արժանի պա-
 տիթդ կըսի, օ՞ն յասպարէզ մնամարտի (Առ-ըլ վէր կը
 բարձրանայ)

Տիր. — Ո՞վ անագորոյն գործիք մահու և աւերածի պղծութեան :

Եւփ. — (Երկու-ուն) մէջ կը բունէ ծաղուարները (Նարը) Օն, եղբարք
 զարկէք, եթէ կը համարձակիք . . . այս ներդաշնակութեան
 թրթուուն գործիքին, զարկէք բայց մտիկ ըրէք սնոր

խաղաղութեան և հաշտութեան երգը՝ (Դուրսէն նուտքէ
Տը լոյն կը լուսէ և կամաց կամաց առողջը ու կանգունը
կիյանն չեւ-էրէն։ ախոյւսները գլուխնին կը ծաւեն, է
վլուզոյ ժունք կունքն է-ի։ է-ի գլուխը պատկը անոնց
գլուխն կը դունէ։ Սահանութիւն, կիցնենէր։ Արթին
աղը արաստիոծ դուրս կը ներունէ սենեակնին գիշերապա-
գեստով, գլուխնը ուսակնիքո, յեւ-ու հոյ ճը։

ՏԵՍԻԼ Բ.

ՆԱՅՆՔ — ԱՐԹԻՆ ԱՂԱ

Արք. — Եփթիկ, ի՞նչ խախքութիւն է աս, ի՞նչ . . . ի՞նչ կը լաք կոր, ո՞ւր ենք . . . մեյ մը սա տեղին վար իջիր նայիմ . . . հիմա կուգամ քեզ օտքիս տակը կառնեմ։

Եւփ. — Ամուսինս, Բասքալը, գիշերազգեստով՝ ուսկուֆայով,
ահ . . . (Տարելու պէս կը լուսոյ, Տիրան է- վահանն նեւեր-
նուն մէջ կառնենէն զինուը)։

Արք. — Ուտքի ելի՛ր, քեզի կըսեմ կոր, չինէ հիմա օրթալըիսը
տակն ու վրայ կընեմ։ (Ե-ի. Դուրս կը հանեն)։

Ռոս. — (Թօթիօրիկ) Պարմը շատ լաւ է կատարում իւր նա-
խանձու ամուսնոյ ոլուն . . . կատարեալ միմիքայով եւ . . .

Շառ. — Ի՞նչ ոլու, ի՞նչ միմիքա . . .

Արք. — (Բէմին վրայ յարաջանալով և ժափահարելով) Պրավօ-
սէ ափէրիմ . . . թու խալիպնուդ խրյափէթնուդ, չամչած
չխախածներ . . . թու ձեր ուսմունքին ալ, թէրպիյէին ալ,
ձեր Բարիզին ալ, ալափրանկային ալ, ձեր տօքթուու-
թեան ալ, ալօքաթութեան ալ, զազէթածութեանն ալ,
վարժապետութեանն ալ . . . թու . . . մօրուքներնիշ, պը-
յըներնիշ. ալ չէք ամէնար կոր պէ . . . իմին տունս Շահ-
զատէ պաշըին թէաթրօն է, չինէ մի Պէյ օղլույի շան-
թանները, աս ի՞նչ խախկութիւն աս ի՞նչ խայտառակու-
թիւն է պէ, մահալէն պիթիւն օտք ելաւ, քոնիս մէջէն
տափտուրի եկայ . . . մէկ բաթըրաը մը քի . . . կը կործա-
նինք կոր, կրա՞կ կայ, մա՞րդ կը մեռցնեն կոր, մարդ կը

մունի կոր, վերջին դատաստանին օրն է, ի՞նչ է ըսի . . .
չէ մէյէր մեր միսպիւները թէաթրօ կը խաղան կոր եղեր . . .
թու չամչածներ ամա խապահաթը ծերինը չէ, խապահաթը
մեր կիմիկ օլաճալիին է քի ձեզի պէս միսավիրի զաւակ-
ները կըլուր ժողվեր է աէ ասանկ ոէզիլութիւններ կընէ . . .
իմ քո ուսասուն տարուան պատիւս մէկ փարայի ըրիք . . .

Եւլ. — Պարո՞ն, կ սրծեմ նախատական բառեր գործածնցիք
որուն համար պատիւ կը պահանջեմ . . .

Արք. — Ո՞ր պատիւդ ծօ' . . . դուն ո՞վ, պատիւ ունեցողը ով . . .

Եւլ. — Լացիքք, պարմներ, ինձի եղած նախատինքը (Թօթիկն
ի՞ւ հանէ և բանէր մը ի՞ւ գրէ) վկայ էք եա . . . պարո՞ն,
դատարանին առջե կը տեսնուինք :

Արք. — Տէփ եղեր սըկէ միւզէվիր, ճիւպէսիլ ավօքաթ-
տուն ա . . . սրվոր նայէ, սա քէրալէյին. դատ պիտի բա-
նայ եղեր,

Եւլ. — (Տօթիկն նունալով Դուրս ելուց առեւն) կը տես-
նուի՞նք, կը տեսնուինք :

Արք. — (Ետուար լին + ուղիւրալով) Սա դունը կը տեսնան կոր.
հայտէ նայիմ, հէմ մէյ մը տահա աս դունին էշիկէն ներս
մոնաս նէ օտքդ կը կոտրեմ . . .

Շառ. — (+ ժիշտալով) Արթին աղա, ամենքը կրնան երթալ,
բայց ես պէտք է որ մասմ, բժիշկին պարտականութիւնը
կը պահանջէ որ չը բաժնուի իր հիւանդին քովէն, անանկ
ատեն մը մանաւանդ ուր ամենին աւելի պէտք ունի իր
ինամքըն :

Արք. — Ճէկլէմ եղեր սաստեղէն, դուրս դուրս . . . պակաս
բլայ քեզի պէս տօքթուը: (Աւել բանէլով Դուրս կա-
յառաջնորդէ)

Շառ. — (Պայտացած) Պարո՞ն, կը համարձակի՞ք բժիշկի մը վրայ
բոնութիւն բանեցնել . լաւ մտածեցէք միւսիւ Բասքալ:

Արք. — Բասքալը դուն ես, բայլաջօ սուրաթլը :

Շառ. — Լաւ մտածեցէք, ես կերթամ այս աեղէն, բայց մի
մոռնաք ըսածաւ տարի մը չ'անցած դւեք ալ անդիի աշխարհ
կերթաք նորհիւ ձեր արանտիսիտին, զոր ես միայն կրնայի
բուժել . . . միաք բարով: (Դուրս կ'ելլի)

Արք. — Սա ալ ճամփեցինք . . .

Վահ. — (Հեգնօրէն) Մնաք բարով Արթին աղա, որքան որ
անհանգիստ ըրինք նէ ներհցէք . . . (Դուրս կ'ելլ)

Արք .— Աս ալ կընաց (Տէրանին) դուն ի՞նչ կեցեր ես . . . տուն
ալ բայլրէ կուզե՞ս կոր . . .

Տիր .— Ես կեցեր եմ և մինչեւ վերջը պիտի կենամ որպէսպի այս
եղածները լաւ մը տեսնեմ, քննեմ, ուսումնավիրեմ, և վաղը
լրագրիս մէջ քեզի վերէն վար խայտառակեմ:

Արք .— Խայտառակը դուն ես . . .

Տիր .— Որովհետեւ, պարո՞ն, դուք իրաւոնք չունիք նախա-
տելու ձեր հիւրերը, որոնց ներկայութիւնը պատիւ մըն է
ձեր տան համար :

Արք .— Քեզի պահէ ատ պատիւը . . .

Տիր .— Դուք այս իրիկուն չարաշար նախատեցիք քաղաքա-
կըրթեալ ընկերութեան մեծագոյն ներկայացուցիչներէն
մամուլի մարդը՝ այսինքն ես. գիտութեան մարդը՝ տօք-
թօն Շաւարչ իրաւոնքի մարդը՝ մէթր Դերձակեան դաս-
տիարակութեան մարդը՝ միւսիւ վահանը . . .

Արք .— Աս քու բոլոր մարդիկդ բապուճիս հետ չեմ փոխեր :

Տիր .— Մնաք բարով, վաղը կը տեսնուինք . . . թերթիս միջո-
ցաւ : (Դուրս կելլէ)

Արք .— Տէփ եղիր սրկէ մայմուն սուռաթլը հէրիփ դուն ալ . . .
(Ուսուառնլայս ուսուառնէն՝ անէին հը ժայռած կը դէպէ-
դէպու երերուներուն, Արթին ինչպէնուր մինակ կարծելով)
Ոիս . . . հետէ օրթալը թէմողցուցինք, տասը տարի է
աս ֆրսանթին կը պէքէի կոր, ասոր մուրատիս հասայ,
սա չէօրտէն չէլէպիները աւել ֆարաշով հէլէ դուրս նե-
տեցինք . . . տասը տարի ակրայ կը կռմտէի, մէկ սաաթէն
ալ էօնրա համեցի . . . օխ սիրտս պաղչկեցաւ պէ (կը նստի)
հախ չունիմ մի ամա . . .

Ռուս .— (Ժանինարկելով) Պուավօ . . .

Արք .— Ծօ տահա մարդ մնացեր է . . . աս ո՞վ է . . .

Ռուս .— (Յեւստը երկնացելով) Թոյլ տուէք իմ կօմրիմէնթ-
ները յայտնել ձեզ. շտո լաւ կատարում էք ձեր ուոան,
երեւի դա Պօլսական կեանքից վեր առնուած մի պիէսա
է . . . ախեր չեմ հասկանում . . . սաացէք խնդրեմ, աւար-
տել է ներկապացումը, թէ չէ մի վերջին տեսարան էլ կայ :

Արք .— Ի՞նչ կըսեմ կոր պէ . . . աս զիւպակէն ուրտեղէն ելաւ . . .
ո՞վ ես տուն միւսիւ . . .

Ռուս .— Ես կովկասից հէնց երէկ առաւօտ ժամանած մի հա-
մալարանական եմ և կոչում եմ Աբգար Նիկոլայոս

Ռոստով Մէլիք Տէք Ղաղարեանց . . .

Արք .— Աս ի՞նչ խալապալը անուն է: (Տէրան ներս կը մանէ)

Տիր .— Հա՛, հո՞ս էք եղեր պարոն Ռոստով, ես ալ ձեզ կը
վհառեմ, եկէք շուտով դուրս ելինք աս տունէն :

Ռուս .— Ի՞նչ, պիէսան վերջացա՞ւ . . . ո՞ւր են միւս աքթէօները:

Տիր .— Ի՞նչ պիէսան . . .

Լեւ .— (Արք մանելով) Տօսիէս, պարո՞ն, տօսիէս, այնչափ
բարկութեամբ դուրս ելայ որ հոս եմ մոոցեր, կարեոր
թուղթեր կան մէջը, վաղուան դատերուս վերաբերեալ:

Արք .— Աս ի՞նչ է ծօ, նորէն կուգան կոր . . .

Ռուս .— (Եր ալլը անցնելով մէկուս) Երեւի պիէսան չէ աւարտել
մեր տեղը անցնինք, տեսնենք վերջին տեսարանը ի՞նչպէս
դուրս կ'գայ . . .

Վահ .— (Արք մանելով) Ներկցէք պարոն Արգար Նիքոլայէկիշ
Ռոստով Մէլիք Տէք Ղաղարեանց, մոոցայ ձեզմէ համաժա
առնելու մեաք բարով, միշուշտ նորէն կը տեսնուինք :

Ռուս .— Սիսեր մեկուս էք, ալ դեր չո՞ւնէք պիէսայում:
(Շաւարչ ներս կը մանէ)

Արք .— (Կարողանած) Ծօ' աս ի՞նչ օյին է, նորէն լեցուեցան . . .
ես հիմա անոնց հախէն կուգամ:

Շաւ .— (Արթին աղջոյն) Պարոն, վիզիթաներս, տասը այցե-
լութիւն ըրած եւմ կէս սոկիէն հինդ ոսկի կընէ, ալօ՞ն
շուտով վճարեցէք . . .

Արք .— Կեցիր երթամ պերեմ: (Բարկութեամբ դուրս կելլէ)

Շաւ .— Փալմի՞նք, արանսախիտը բոնեց: (Դուրս կելլէ)

Ռուս .— (Ժանինարկելով) Ես տրամա կարծում էի, բայց երեւի
կօմէտիս է . . . ներողութիւն պարոն, պիէսան աւարտել է . . .
(Արթին աղջ բեմ կուգայ էւրուց դաւազն մը առաջ)

Արք .— Ծօ դուն ի՞նչ երկու սահաթէ թութիւնի պէս փա-
կեր խափա տիւտիւկէմիշ կընես կոր պէ՛ հէրիփ . . . դուրս
ելիր սըտեղէն:

Ռուս .— Երեւի պիէսայի պահանջը նէ դա . . . (Կամաց կամաց կելլէ)

Արք .— Էօ՛ք պէ՛, վայ շունչանորդիներ վայ:

Ռուս .— (Արք մանելով) Բայց խնդրեմ սաացէք պիէսան աւար-
տել է:

Արք .— Ծօ տահա հո՞ս ես . . . (Բարկութեամբ վրան կը վաղի)

ՎԱՐԱԳՈՅՐ



Գ. ԱՐԱՐՈՒԱԾ

ՀԱՅՑՈՒԹԻՒՆ.

Տեսարանը Ա. Վարագոյրը կը ներկայացնէ.

ՏԵՍԻ. Ա.

Ո.Զ

Իօզ. — (առաջնային) Նորէն երկար բարակ վիճաբանութիւն մը ունեցաց հօրս հետ . . . իրեն հասկցուցի որ Ազրիպաս աղան չեմ ուզեր, սաստիկ բարկացաւ, հօրս քովէն լայ մայրս օձիքէս բանեց. Դեռ տօքթէօր Շաւարշ միտքէն չէ համած, ի՞նչ ընելս չեմ դիմեր . . . բայց չէ չըլլա՛ր, չեմ ուզե՛ր, չեմ ուզե՛ր, ոչ Ազրիպասը պիտի ըլլայ իմ ամուսինըս, ոչ ալ տօքթէօր Շաւարշը . . . աւելի լաւ կը համարիմ անձնասպան ըլլալ քան թէ իմ սրտիս չ'ընտրած ճաշակով, բնաւորութեամբ, գաստիարակութեամբ ինծի բոլորովին հակառակ մարդու հետ ամուսնանալ. . . ի՞նչ մեծ դժբախտութիւններ կրնան ծագիլ անյարմար ամուսնութիւններէ, ճնողացս օրինակը անա մէջտեղն է, ամէն օր վէճ, ամէն օր կուտ, նախսատինք իրար չհասկնալ, իրար վիրաւորել, սրտադոլ, իրար անցում, վերջապէս ժժոխք և կուզեն զիս ալ նետել այդ դժոխքին մէջ. . . չէ, չէ չըպատի մտնամ. . . իմ երազս, իմ խտէալս է, ամուսնութիւն մը փոխադարձ սիրոյ և հասկացողութեան վրայ հիմնուած իրարու գաղափարակից սրտակից, էակներու լծորդութիւն մը, որ տարիները հետզհետէ ամրապնդեն փոխանակ լուծելու. և այս միայն չի բաւեր, այս չէ միայն. ըստ իս երջանիկ ամուսնութեամ մը ամբողջ դրամագլուխը . . . նիւթեականն ալ պէտք չէ մոռնալ. ևս անսնկ հիմակուան աղջիկներուն պէս ցնորական գաղափարներ չունիմ, կուզեմ որ իմ ամուսինս հոգիի մը և մտքի մը հետ խանութ մալ ունենայ, ուսումնական ըլլայ, աղնիւ ըլլայ, բայց նաև գործի մարդ ըլլայ. առանց Ազրիպասին նմաներու բարեկիրթ ըլլայ, առանց իմաստակութեան . . . վերջապէս չի նմանի սա տօքթէօր Շաւարշին պէս զէվզէկներուն. . . ան Տիգրանս. . . ահաւասիկ խտէալիս համապատասխանող միակ ամուսինը. . . գործունեայ, դրական, խելացի, միեւնոյն ատեն մնձ զարգացումի տէր, աղնիւ զգացումներով բարձր գաղափարներով :

ՏԵՍԻ. Ը.

Ո.Զ — ԴԱՄՆԻԿ

Գառ. — Բարի լոյս Վարդուհի, մինա՞կ ես . . .

Իօզ. — Բարե մօրեղբայր . . . ախ ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս մէկ կողմէն հայրս ոտք կը կոլսէ որ Ազրիպաս աղան առնեմ, մայրս տօքթէօր Շաւարշը, իսկ սիրսա ալ կը պնդէ որ Տիգրանը առնեմ. . . ախ ի՞նչ ընեմ մօրեղբայր դուն ազատէ ինծի այս յուսահատ վիճակէս. . . բաւական ատեն է Տիգրանէն լուր չունինք. ի՞նչ ըրաւ գործը յաջողցուց, չեմ դիտեր . . .

Գառ. — Առ սա նամակը տէ կարդա, աղջիկս . . .

Իօզ. — (վրան նայելով) Տիգրանէն է . . . (կոկո՞ բարձրակայաց կորդով)

«Ծիրելի Գառնիկ աղա

«Կուգամ այսօր յաղթութիւն աւետելու, վերջապէս երեք «տարուան դիւցաղնական ջանքերս յաջողութեամբ պսաւ «կուցան. երէկ իմ փափաքիս հասայ. պայմանագրութիւն «մը կնքեցի վարպետիս հետ. որով այլեւս փոխանակ իր «պաշտօնեան ըլլալու՝ իր ընկերն եմ: Ալ հիմա ճակատաբաց կրնամ ներկայսուոլ և ինդրել վարդուհիս ձեռքը, «որովհետև կը յուսամ որ ոչ Արթին աղան և ոչ ալ տիւ «կին եւփիմէն կրնան առարկութիւն մը ընել մեր ամուսնութեան գէմ, ինդրեմ այս լուրը շուտով հաղորդեցէք «Վարդուհիս, և ըսէք իրեն որ երջանկութեան օրը յուր «սացածէն աւելի մօտ է»:

— Ա՛հ . . . վերջապէս.

Գառ. — Ես քեզի չէի՞ ըսեր կոր որ յոյսդ չի կտրես:

Իօզ. — Բայց հայրս, Ազրիպաս աղան:

Գառ. — Խօսքը մէջերնիս, կարծեմ թէ գործերը աւրուած են, մնանկանալու վրայ է, եթէ մինչեւ հիմա չէ մնանկացած:

Իօզ. — Ո՞հ ի՞նչ լաւ լուր . . . է տօքթէօր Շաւարշը:

Գառ. — Անոր ալ գլուխը փորձանք մը կայ, կարծեմ ասոր վաղը ծակը պիտի երթայ քիչ մըն ալ հոն տեղի հիւանդներուն նայելու:

Իօզ. — Ի՞նչ կըսես մօրեղբայր . . .

Գառ. — Հապա՛, սխալ բէջէթա մը գրեր է, կերւայ քի զարլը իւաճ մը չափէն աւելի տուեր է, այլահալէմ մար-

դը առօք փառօք անդիմ աշխարհ ճամբեր է, դատ բացեր են, բանտարկուի պիտի. սա ո՞ւր է հոս տեղը ավօքաթ մը կուգար, միւսիւ կեմն է ի՞նչ է. սա առառու սօխախը եախայէս բանեց էրկան բարակ խօսեցաւ:

Պօզ. — Օխ, ուրեմն սա զէվզէկէն ալ ազատեցանք... սա ի՞նչ բարի լուր էր մօրեղրայր:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆԻ — ՍԻՍԱԿ

Սիս. — (Տառական) Պարոն Գառնիկ, տիար Ադրիանոսը մատուկով մը եկեր ձեզ տեսնել կուզէ կոր...

Գառ. — Թող ներս դայ... (Սէսոնի դուրս կելլէ) (Ձէնուսի) ծայրը փրթամ նայինք ի՞նչ է:

Պօզ. — Ես կերթամ (դուրս կելլէ)

ՏԵՍԻԼ Գ.

ԳԱՐԵՆԻԿ ԱՂԱ — ԱԳՐԻՊԱՆ

(Երեսէն անդուի մը նէր կը բերեն)

Գառ. — Խեր է Ագրիպաս աղա...

Ագր. — (անդուի մը բերաղներուն) Հոս գրէք սանկ... խերէ ըսենք որ խեր ըլլայ Գառնիկ աղա... Արթին աղան ո՞ւր է հոս չէ... Օգոստոս ելաւ ի՞նչ պիտի ըսէիր:

Ագր. — Ես զաթը խօսած եմ իրեն, սա մատուկը ձեզի պահ պիտի տամ քիչ մը տան...

Գառ. — Մէջը ի՞նչ կայ որ...

Ագ. — Թալսըմ մը հին սինէտներ, գործի թուղթեր, ընտանեկան գրութիւններ... գեղ կերթամ կոր, կէօջ ըրի, նայեցայ քի սա մատուկը հետս առնեմ զօր պիտի ըլլայ. մէկալ օր Արթին աղային ըսիքի քեզի դրկամ. բէք աղէկ կըլլայ ըստ, մինք տեղ ունինք ըստ:

Գառ. — Աղէկ աղէկ հասկցայ (Ձէնուսի) ասոր տակը բան մը կայ ամմա. կեցիր նայինք էլպէթաէ օրթան կելլայ... է՛ գործերը նամըլ են Ագրիպաս աղա... իմացայ քի օրթամբը քէսատ է եղեր...

Ագր. — Շատ քէսատ է Գառնիկ աղա, շատ քէսատ... ի՞նչ է նէ ուրիշ ատեն կը խօսինք, հիմա աճէլէ դործ մը ունիմ. ափ կընեն... մնաս բարով...

Գառ. — Գնա' գնա', գործիդ նայէ... երթաս բարով... (Ագրիպաս կելլէ) մարդուն հիյէթին բէք չհաւնեցայ, մութախսթօվը նետած է կամ պիտի նետէ... ասոնք ալ մաղաղաժին թուղթերը ըլլալու են (անդունին ուու կելլայ) ծօ բալենքն ալ վրան մոռցեր է, մարդը բիւսիւթին շաշրմին բրեր... բանանք նայինք... ծօ... բոլորը տետրակներ, թուղթեր... հասկցանք, խանութին վախցուցեր է..., (կը գոյնէ) Արթին աղան գար տէ խապար տայինք:

ՏԵՍԻԼ Վ.

ԳԱՐԵՆԻԿ — ՍԻՍԱԿ — ՇԱԽԱՐԾ

Սիս. — (Կեր մառաւլով) Տօքթէօր Շաւարչ: (Դուրս կելլէ)

Գառ. — Ծօ' սա տահա կը պտամի կոր, հարիար չչ մտեր:

Շաւ. — (Ռուգնութեամբ նէր կը հոնէ և գաւանինի աղան կունաւուղ կեր լուինաւունին զրայ կեյնայ) Ա՛հ, այս անգամ հապը կը եցի...

Գառ. — Ի՞նչ է ան տօքթէօր, բահաթուլով էք ի՞նչ ունիք... Քիչ մը թէւացը կերեւաք կոր:

Շաւ. — (Ձէնուսի) Վայ առանձին չեմ եղեր... բարեւ, ի՞նչպէս էք, աղէ՞, էք, որպիսութիւնիդ ի՞նչպէս է... առողջական վիճակնիդ յա՞ւ է, տիկինը ի՞նչպէս է... օրիորդը ի՞նչպէս է, Արթին աղան...

Գառ. — Ամէնքս ալ ողջ առողջ ենք, փառք Աստուծոյ... բայց դուք հիւանդ կերեւաք կոր... ի՞նչ հապ է որ կը եր էք:

Շաւ. — (Ղութամբ) Հա բան... բան չէ... հապ չէ... այսինքն... այս' հապ, զլուխս կը ցաւէր կոր աէ անթիրիունին առի, ես ալ թէւ ուրիշներուն միշտ հապ տուած եմ, բայց ես չէի կը ած երբէք, մանաւանդ ասանկ հապ մը...

Գառ. — Այս', այս' կերեւայ կոր...

Շաւ. — Բայց ի՞նչ որ է... ինդիրը այն չէ, արդեօք տիկինը կը նամէմ վայրկեան մը տեսնալ, շատ կերեւոր է, անհրաժեշտ է...

Գառ. — Շատ աղէկ երթամ իմաց տամ... (Դուրս կելլայ)

Շաւ. — (առանձին) Այս' կը եցինք հապը, ո՞ւր տեղէն ալ այդ փորձանքը զլուխս եկաւ, բաւական աշխատեցայ որ յանձնական քեղագործին աշկերտին զլուխս փաթթեմ բայց... ձանքը զեղագործին աշկերտին զլուխս գատապարտեցին... այս' զիս, չեղաւ և վերջապէս զիս գատապարտեցին...

տօքթէօր Շաւարչ, տը լա Փաքիւլթէ տը Բարի, էքս էնթէրն տը լօքիթալ տը լա շարիթէ . . . այսօրուան օրս վեց ամիս բանարկութեան դատապարտուած եմ . . . ձերքակալման հրամանագիրը ելած է արդէն, ոստիկաններն ալ ետեւէս ինկած են. պատուհաննէս տեսայ և պարտէզին դուռնէն հաղիւ կրցայ կծիկը դնել . . . կառք մը առի և շիտակ հոս եկայ, հի Րակ Նայինք կրնանք հոս քանի մը ժամ խօսակցութեան բանուիլ տիկին Եւիմէին հետ, մինչեւ որ ոստիկանները հետքս կորսնցնեն և վաղը պէտք է որ մէսամբռափով անպատճառ Եւրոպա մեկնիմ, չէնէ բանս բուրդ է . . .

ՏԵՍԻՒԼ Զ.

ՇԱՀԱՐԾ ԵՒՓԻՄԵ

Եւփ. — Օ՛ տօքթէօր դո՞ւք էք . . . այն աղետալի գիշերէն ի վեր զիրար չտեսանք, արդեօք ո՞րքան վշտացած էք մեզի դէմ, ներողութիւն կը խնդրեմ ամուսնոյս կոշտ վարմութին համար :

Շառ. — Զ'արժեր տիկին, ես այդ դէպքին բնաւ կարևորութիւն չտուի, մոռցած եմ արդէն :

Եւփ. — Որքան աղնիւ էք . . . ձեզի այնպէս կը վայլէ ըսել:

Շառ. — Հաւատացէք տիկին ես այդ բանը բժիշկի աչքով դիտեցի, ես ձեր ամուսնոյն բրածին մէջ պարզապէս իր հիւանդութեան՝ այսինքն՝ աբանստիստի մէջ դրգուռութեան նշանը միայն տեսայ և ոչ այլ ինչ . . . մենք բժիշկներս վարժուած ենք այս տեսակ բաներու . ի հ ցաւս այն է միայն որ, ձեր սիրելի ամուսնոյն հիւանդութիւնը լաւ մը չբուժած կը մեկնիմ:

Եւփ. — Կը մեկնիք . . . դէպի ու՞ր, տէր Աստուած :

Եւփ. — Եւրոպա . . . Վիէննա բժշկական համաժողով մը պիտի դումարուի մօտերս, ինծի ալ հրաւէր եկաւ Վիրխովի կողմէ, կ'երթամ կոր . . . եկայ հրաժեշտի ողջոյններս ձեզի մատուցանել :

ՏԵՍԻՒԼ Է.

ՆՊՅՆՔ — ՍԻՍԱԿ

Սիս. — (Դուռէլութէ) Տիկին, տօքթէօր, ահոելի բան մը . . . փաստաբան մը, ոստիկաններ, մըխթար մը, ջաւուշներ, դրան մարդեր, վերջապէս վարն են . . . եկան . . .

Շառ. — (Թէկուակ) Վայ', ինծի համար է, օձիքը ձեռք տուինք :

Եւփ. — (Ասրաւափած) Ոստիկաններ մեր տունը :

Շառ. — Այս տիկին դող մ'ելլաք . . . զիտեմ ինդիրը . . . ոստիկանութեան նախարարը քոլէրայէ բռնուած է, երեք օրէ ի վեր ինծի լուր կը դրկէ կոր, ես ալ կը վախնամ չեմ երթար կոր . . . մահու և կենաց ինդիր է և չեմ ուզեր Եւրոպա երթալէս առաջ մեռնիլ. կ'երևայ թէ ձարահատած ոստիկան դրկեր է ետևէս զիտեմ տանելու համար, դուք հոգ մի ընէք, միայն ինծի պահուըտելու ա՛ղ մը քանի մը վայրկեան միայն . . . (Արս հողմը կը նայէ անդուկը կը դէնայ) ներողութիւն կը ինդրեմ տիկին, ցանեսութիւն (կը մանայ Քջը ու կը դոցէ):

Եւփ. — Տէր Աստուած ինչեր կ'ըստանք կոր . . . բայց տօքթէօր . . .

ՏԵՍԻՒԼ Ը.

ՆՈՅՆՔ — ԳԱՌՆԻԿ

Գառ. — (Հանելով) Էֆթիք, հայտէ շուտով սենեակդ քաշուէ, տուներնիս կոխուցցաւ, խոզարկութիւն պիտի ըլլայ, ոստիկանները վեր կելլան կոր . . .

Եւփ. — Ահ, ինչ կանցնի կը դառնայ կոր արդեօք, տէր Աստուած, միւսիւ Բասքալն ալ հոս չէ . . .

Գառ. — (Հրելով) Գնա՛, գնա՛, կուգան կոր (Ե-փ. կ'երլայ)

ՏԵՍԻՒԼ Թ.

ԵՒԻՈՆ — ՄՈՒԽԹԱՐ — ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ — ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԵԱՅ — ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆ

ՄԻՍԱԿ — ԳԱՌՆԻԿ

Լեւ. — (Յեւուր Ռւադի Տը գաւառնէկն) Յանուն օրինաց և արդարութեան կը հարցնեմ ձեզ թէ ձերմակելէնի վաճառական Սամաթիացի Ագրիպան Սաղաթէլեանի վերաբերող մատուկ մը հոս բերուած է թէ ոչ :

Գառ. — Սա բլալու է . . . քիչ մը առաջ բերաւ ձգեց . . . բայց ինչ կայ որ . . .

Լեւ. — Ի՞նչ պիտի բլալայ, Ազրիստա աղան մնանկացած է և իր տեարակները փախցուցած է, առեւտրական դատարանին վճռին համեմատ, պաշտօն ուշինք սոյն անտրակները գտնելու ու կնիքի տակ առնել :

ՏԵՍԻԼ Փ.

ՆՈՅՆՔ — ԱՐԹԻՆ

Արք. — (Տանելով) Ի՞նչ է, ի՞նչ կը լամբաք կոր... (Փաստաբանն
և պաշտօնեայի անդունքը է ի և ինչեն...) ոստիկանը ընդհա-
նութիւն)

Ուս. — Ո՞վ է այստեղի տաճառէրը...

Արք. — Ես եմ, ի՞նչ կայ քի...

Ուս. — Իմացանք որ տօքթէօր Շաւարչ անունով վեց ամսուան
բանտարկուած հայ բժիշկ մը, ձեր տունը եկեր ապաստա-
ներ է, եկանք զայն փնտռել:

Արք. — Տօքթօր Շաւարչ մի... էս անիկա շատոնց վաճառեցի
առ տեղէն:

Ուս. — Կը ստէք էֆէնտի, մեր լրտեսները տեսած են ձեր
տունը մտնելը (ոստիկաններուն) շուտ, տանը ամեն կողմը
ծակը ծուկը խուզարկեցէք, մասանէն սկսեալ մինչեւ վեր-
նացարկը փնտռեցէք փախստականը և եթէ հոս գանուի
ձեզ ալ միասին ձերբակալել պիտի տամ...

Արք. — Ուզածնուղ չափ փնտռեցէք, աղէկ կիտէմ քի հոս չէ:

Գառ. — (կամաց ըլ Արթիւնին) Սուս եղիր, խօսքը մէջերնիս,
քիչ մը առաջ հոս էր, Եւփիմէին հետ կը խօրաթէր կոր...

Լեւ. — Դուք ալ ոստիկան էֆէնտի, ըսել է տօքթէօր Շաւարչը
ձերբակալելու պաշտօնը ունիք:

Ուս. — Այո, վճիռը երէկ ելաւ:

Լեւ. — Գիտեմ, արդէն դատ բացողը ես էի...

Արք. — Ճանըս ավօգաթէ էֆէնտի, ի՞նչ ինդիր է աս... տօք-
թօր Շաւարչը ի՞նչ է ըրեր քի...

Լեւ. — Ի՞նչ պիտի ընէ, սխալ դեղ մը տուաւ, մարդ մը մեռ-
ցուց, դատ բացի, վեց ամիս ծակը նետել տուի...

Արք. — Եա... զաթէն ես կիտէի կոր քի այդ մարդը սաղլամ
այսք խասի մը չէր... մէյմալ մեր կիտիկը մեղի փեսայ
պիտի ընէ այդ էշէք հէրիքը:

Ուս. — Ուրեմն Պ. փաստաբան մնտուկը տանինք այնպէս չէ...

Արք. — Ուր կը տանիք կոր Ազրիպաս աղային մնտուկը...
ի՞նչ է ատ, մէօնիւրլէմիշ էք ըրեր:

Լեւ. — Ազրիպաս աղաս թօփ նետեց, երէկ չէ առջի օրը իւած
ելաւ չիմացա՞ր. թուղթերը հոս փախցուցեր է, եկանք կը
տանինք կոր...

Արք. — Վա'յ Ազրիպաս աղան թօ'փ նետեց... ծօ շմտի ջըլ-
արրըրմ... ատհա աս առտու տեսայ ինծի պան մը չըսաւ:

Ուս. — (ոստիկանները է Տանին) Ի՞նչ լուր նայինք...

Մէկը. — Ամեն կողմ փնտռեցինք մէկը չգտանք...

Ուս. — Ուրեմն մեր պարտքը կատարած ըլլալու համար անդամ
մըն ալ պէտք է սա մնտուկը նայինք:

Լեւ. — Ո՞չ պարոն ոստիկան, այս մնտուկը կնքուած է յանուն
օրինաց և ըստ բացորոշ տրամադրութեան առևտրական
օրինագրքին 533-րդ յօդուածին երկրորդ հատուածին և
ըստ առեւտրական դատարանի վճռոյն, ոչ ոք և ոչինչ
կրնան խզելայս կնիքը...

Ուս. — Պարոն, մեր հրամանագիրն ալ բացորոշ է, ուր որ ալ
ըլլայ փնտռել և գանել տօքթէօր Շաւարչը և բանտ տա-
նիլ... ուրեմն թոյլ տուէք մեր պարտքը կատարել և
մի ընդդիմանաք:

Լեւ. — Անկարելի է ոստիկան էֆէնտի (Ռուղիւը ցուցանելով)
հաճեցէք կարդալ և պիտի համոզուիք:

Ուս. — Դուք այս թուղթը կարդացէք:

Արք. — Ախսպար Բնչ կուտ կը կոր պէ... առէք տարէք սա-
պէլալը մնտուկը, դուրսը բայ ըրէք, իմ տունս ատլիյէն է
չէնէ մի զապլիյէ (ոստիկանները է Տանինան անդունին),
դատապահնուը կ'արգէլէ)

Ուս. — Պէտք է բանալ, օրէնքը... արդարութիւնը վճիռը...

Լեւ. — Կեցէք, այս խնդիրը լուծելուն մէկ օրինական մէջոցը
կայ... ըստ որում այս պարագան նախատեսուած չէ օրի-
նագրքին մէջ, պէտք է որ անյապազ ինդիրը ենթարկենք
սափողական գործոց դատաւորին, առնենք մնտուկը դա-
տարան տանինք:

Ուս. — Լաւ կը դունիմ ատիկա (ոստիկաններուն) շուտ, սա
մնտուկը վեցցուցէք նայիմ:

(«Նոյնուկը վեցցուցած տակէննին տակէ տակէտակէ կիրառայ և
Շատարը կերւայ Ռուղիւնու և ուերբակներու մէջ)

Ամենիք — Ա՛:

Շաւ. — Երթանք քանի որ պէտք է, վեց ամիս ձեղի հիւր եմ,
եթէ բանտին մէջ հիւանդ ունիք ինծի համար գործ չի պակ-
սիր այն ատեն. բժիշկը ամէն տեղ իւր մարդասիրական
պարտականութիւնը պէտք է կատարե, ըլլայ բանտին մէջ
ըլլայ պալատներուն մէջ, առ այժմ մնաք բարով տիարք.

բանտէն ելլելէս վերջը նորէն կը տեսնուինք... Արթին
աղա ինքինքնիդ լաւ նայեցէք, տուած ղեղագիրներս
դործածեցէք. եթէ կուզէք որ աբանտիսիդնիդ բուժուի...

Արք.— Երթաս բարով... երթաս բարով...

Աւ. — Ասկէ յաջող լուծում կարելի չէր երևակայել, խնդիրը
տակէն լուծուեցաւ, կնիքը անեղծ մնաց, օրէնքը յարգուեցաւ
վճիռը տեղը գնաց, ռատիկանութիւնն ալ գո՞ն մնաց, ար-
դարութիւնն ալ... ուրեմն ժողվենք սա տետրակները և
մնտուկն ալ առնելով երթանք. ա՛լ գործ չունինք հոս
(կ'ե՞լա՞ն)

ՏԵՂԻՆ ԺԱ.

ԱՐԹԻՆ—ԳԱՐԵՒԿ—ԵԽՈՒՄԵ

Եւփ.— (ՏՊՆԵԼՉՈՎ) Տեսա՞ր մի քու Ագրիպաս աղա՞դ, պատւա-
ւոր վաճառական, քրէտիթօյի տէր, բիացային վրայ անուն
հանած, Աստուածավախ, 4-5000 ոսկի շտկած, ասնկ
աղէկ, նանկ խցախ փեսացուդ... տեսա՞ր հիմա, առ տէ
նստէ'...

Արք.— Է դուն ալ տեսա՞ր մի քու մինչեւ երկինք հանած տօք-
թօռք, բաշաներու՝ պէյերու՝ էֆէնտիներու նայող, Բա-
րիզէն նոր եկած, Պոլոյ մէկ մէկ հատիկ բժիշկ, ուսում-
նական, զարգացած, քաղաքավար, ասոր անոր փորէն
քար հանող, կռնակէն շէքէր հանող, հիմայ կրնայնէ ինք-
զինքը մահպուսէն հանէ...

Գառ.— Ինծի նայեցէք, պարապ տեղը իրարու սիրտ մի կոտ-
րէք, եղածը եղաւ հեմալ բէք աղէկ եղաւ, ձեզի ասանկ
բան մը պէտք էր քի, կուրցած աշուլնիդ քիչ մը բանա-
յիք, նէ ան քու տօքթօռ Շաւարշդ մարդ էր, նէ ալ քու
Ագրիպաս աղադ:

Արք.— Ատոնք աղէկ ամմա հիմա ինչ ապաւր ուտելու է, օր-
թատեղը փեսացու չմնաց:

Գառ.— Աստուած Վարդուկին խսմէթը զաթէն տուած է, հոգ
մընէք:

Արք.— Աս ինչ խօսք է...

Գառ.— Շատ չը քըշեր կը հասկնաս... պէլքի ասօր յայտնի
կըլլայ:

Սիս.— (ՅԵՐԵՒ+ՔՐԵՐ Տը ԿԵՐԱ կը ՏՊՆԵԼ) Հիւր մը եկած ձեզ
ահանել կուզէ:

Գառ.— (ԿԱՐԴԱԼՉՈՎ) Նիկողոս Պէյազեան...

Արք.— Ծօ', Նիկողոս էֆէնտին... թիւձճարն է, ներս մացուը
ինչո՞ւ եկեր է ածապա, առջի անդամ նէ:

Եւփ.— Նիկողոս էֆէնտին ո՞վ է...

Արք.— Ի՞նչ կըսես կոր քա, 20-30,000 ոսկի տէր է, երեք
հատ մանիփաթուռայի մաղաղա ունի. Սթամպօլ, Պէյ Օլլու,
Ղալաթիա...

ՏԵՂԻՆ ԺԱ.

ՆՈՅՆԻՑ—ՆԻԿՈՂՈՍ ԱՂԱ

Արք.— Օ՛, հրամմեցէք Նիկողոս էֆէնտի, աս ի՞նչ պատիւ է
կընէք կոր մեղի, մենք լայլն էինք ձեր վիզիթային...
էֆթիկ, քեզի բաէզանթէ լնեմ... Պէյազեան Նիկողոս
էֆէնտի, մանիփաթուռայի թիւձճար, էլպէթ լսած ես...

Եւփ.— Շատ ուրախ եմ էֆէնտին ճանչնալուս, թէև լսած եմ
բայց տեսնելու պատիւը չէի ունեցած...

Նիկ.— Շնորհակալ եմ ալիկին, պատիւը փոխադարձ է:

Եւփ.— Սանկ քանարէյին վրայ հրամմեցէք, Նիկողոս էֆէնտի:
Արք.— Հոս տահա բահաթ կընէ էֆէնտին...

Նիկ.— Խնդրեմ անհանգիստ մի ըլլաք, ես աթոռին վրայ
աւելի հանդիսան կընեմ...

Արք.— Ի՞նչ կըսէք Նիկողոս էֆ. դուք աթոռին վրայ նստիք
նէ մենք ո՞ւր նստինք... չըլլալիք բան է նէ...

Եւփ.— Նիկողոս էֆ. սանկ քանարէյին վրայ հրամմեցէք, տե-
սէք աս տեղէն ծովը կերեայ:

Արք.— Հոս ֆօթէօլին վրայ նստեցէք էֆէնտիս, աս թառա-
ֆէն բիւթիւն Զամլճային լեռները կերեայ... (Նիկ. կը նստի)

Արք.— (ԵՐԿԻՆ+Ք ԻՐԵՆԿ ՔԱՐԵՎԵԼՉՈՎ) Զըլլար ըսի էֆէնտիս,
զահիր կը վայլէ...

Նիկ.— Էյ բէք աղէկ ճանըմ քանի որ այդչափ կը պնդէք կոր
(Քօթէօլին վրայ կը նստի)

Արք.— Հա չէօյլէ...

Եւփ.— Վայ Նիկողոս էֆ. սանկ հէ... զիս կոտրեցիք, իմ
դիտնալս ալագրանկային մէջ կնկան խօսքը մտիկ կըլլուի,
ոչ թէ էրիկ մարդունը...

Նիկ.— Իրաւունք ունիք տիկին, ներողութիւն կը խնդրեմ:
(ՔԵՐՈՒ ՔՈՒԵԼ ԿՌԵՂ)

Արք.— Զէ, նայէ ատ չըլլար, քանի քի նստեցար մնալու ես,
ետքը խաթրըս կը կոտրի հա...

Նիկ . — Ե՞ս, անհանկ է նէ ի՞նչ ընկնք տիկին, համակերպելու է, ևս ձեր խաթրն ալ չեմ կոտրեր, քիչ մըն ալ քանաք բէյին վրայ կը նստիմ :

Արք . — Հա՛, նայէ ատոր ըսելիք չունիմ...

Նիկ . — Հիմա Սրթին աղա, սա իմ այցելութեանս պատճառը երկու խօսքով բացառեմ. ես քովս դրագիր մը ունիմ, Տիգրան Կիրկէրեան...

Արք . — Հա՛ միւսիւ Տիգրանը... կը ճանչսամ նէ, բէք քիզար երխասարդ մըն է...

Նիկ . — Հիմայ անիկայ իմ ընկերս եղած է...

Արք . — Ի՞նչ կըսես Նիկողոս էֆ... ափէրիմ օղլում, ի՞նչ ալ շուտով առաջ գնաց...

Նիկ . — Այս շատ շուտով, ան ալ չորհիւ իր վարք ու բարքին և հաւատարմութեանը, զաւկիս պէս կը սիրեմ, մէկ հատիկ չզտնուած տղայ է... ինչ է նէ Սրթին աղա, հիմայ քանի որ դուն ալ հաւած ես, ինդիրը կը դիւրին նայ, ես հիմակ Տիգրանին կողմէն եկած եմ, ձեր աղջիկը Օր. Վարդուհին ամուսնութեան ուզելու, նայեցէք, մասնեցէք, հարցուցէք, վնստուցէք և ինծի պատասխան մը տուէք :

Արք . — Սման Նիկողոս էֆ. ի՞նչ կըսես կոր, հարցունելու վնստուցելու ի՞նչ պէտք կայ, պատասխանս հա է, հա օղլու հա է... քանիքի դուք մէշն էք, քանիքի ծեղի պէս միւթէպէք թիւննարի մը օրթախն է եղեր...

Եւփ . — Մի աճապարեր միւսիւ Բասքալ... (Խոնդալը) կարծեմ թէ Նիկողոս էֆ. միայն հօրը հաւանութիւնը չի բաւեր... այսպէս չէ... այդ ձեր միւսիւ Տիգրանը գործունեայ, երիտասարդ, ձեր ընկերը, ատմաք ամենքն ալ աղէկ ըսելիք չունիմ, բայց ուսումնակա՞ն է, զարդացեալ է, լեցու դիւթիւն...

Արք . — (Ե-Քիմէին) Ի՞նչ խալթ կը խանես կոր քա կնիկ...

Նիկ . — Այս տիկին (2 լուղի կը հանէ) համեցէք այս թուղթերը կարդալ, Տիգրանին տիբումաներն են (Թէին ալ Արնինին առաջը) սա ալ ձեզի համար :

Արք . — Ես անհանկ բաներու պէտք չունիմ, ես տիբումա չեմ վնստուեր :

Նիկ . — Սրթին աղա սա տիբումա չէ, սա ալ մեր Տիգրանին հետ օրթախտ թեան քննթրախն է :

Արք . — Ի՞նչ պէտք կայ էֆէնտիս, ձեր խօսքը հազար թուղթ

կ'արժէ, (Թէկուսէ) տեսա՞ր մի սա թուղթը, հազար տիբումայի տեղ է...

Եւփ . — (Թէկուսէ) Աս թուղթերը հազար հատ քննթրախ կարժէ..

Նիկ . — Ուրեմն ասանկ (Քէլլէ) ես կերթամ, Սրթին աղա դուք քօնթրախէը կարդացէք և դուք ալ տիկին վկայականները և կարելի եղածին չափ չուտ ինծի պատասխան տուէք...

Արք . — Իմ ճողապս հա է...

Եւփ . — Իմ պատասխանս ալ այսու...

Նիկ . — Մնաք բարով...

Արք . — Երթաք բարով, նորէն հրամմեցէք (Նէի. Քէրիւայ)

Եւփ . —

ՏԵՍԻԼ Ճ.Գ.

Ա.ՐԹԻՆ . — Եփիթմէ . — ԳԱՐՒՆԻԿ

Արք . — Իշխէ արատըլլըմ կիւվէի...

Եւփ . — Ահա իմ խտէալ փեռաս...

Արք . — Եազգնութենէ եղած...

Եւփ . — Ռոպէրթ գոլէճէն վկայուած...

Արք . — Նիկողոս էֆէնտիխն հետ օրթախ եղած...

Եւփ . — Մարսիլիոյ առևետրական վարժարանը մտած...

Արք . — (ակնոց դնելով) Հարուրին 40 շահ...

Եւփ . — Զորս լեզու, հայերէն, տաճկերէն, գալլիէրէն անդ զիերէն :

Արք . — Ասէք զատ եազգնութան ալ ամսական...

Եւփ . — Հապա ութիւնները... բնագիտութիւն, տարրալութիւն, հանքաբանութիւն, պատմութիւն, հոգեբանութիւն, փիլսոփայութիւն...

Արք . — (այս մէջնոցին Գառանէի կը մոնէ, Արնին Ե-Քիմէին) Տեսա՞ր մի մարդը:

Եւփ . — Տեսա՞ր մի շնորհով զարդացեալ երիտասարդը:

Արք . — Ի՞նչ փարա կընէ զարդացումը, սա պէտք է սա, քանիի կառնեմ քու ստ տիբումադ :

Եւփ . — Ի՞նչ արթէք ունի քու այդ քննթրախթդ...

Արք . — Ի՞նծի նայէ նորէն չ'սկսինք (Ըստղիլը ցուցնելով) ես աղջիկս ասոր պիտի տամ...

Եւփ . — Զէ, ես ալ ասոր պիտի տամ...

Արք. — Զէ, իմ խօսքս պիտի ըլլայ... .

Եւփ. — Զէ, իմ խօսքս...

Գառ. — (առաջ գտալով) Ի՞նչ կոխւ կընէք կոր պէ, ուրախութեանուդ խելուընիդ փախուցի՞ք, ասո թուղթին տէրն ալ Տիգրանն է, ասո թուղթին տէրն ալ...

Արք. — Ծօ հա իրաւ... էյ անկարտար կոխւ ընելու ալբամիշ եւ դած ենք քի, շաշլրմիշ ըրինք:

Գառ. — Ինչ է նէ, ալ հիմա երկուքնիդ ալ մուրատնուդ հասք. դուն քուկին ըսած մարդդ գտար, ուսումնական սաք. դուն քուկին ըսած մարդդ գտար, թիւձնար, Ռօզն ալ զարգացեալ, դուն ալ քու ուզածդ, հէմ ուսումնական հէմ գործի մարդ, որով իր ուզածը, հէմ ուսումնական հէմ գործի մարդ, ձեր երեմէկ փեսայի տեղ երեք փեսայ կունենաք կոր, ձեր երեքին ալ յարմար... յնձի նայեցէք, ալ ասկէ վերջը անանկ ալաֆրանկայի ալաթուռքայի կովուներով կեանքերնիդ հաւաամ մընէք... Արթին աղա դուն քիչ մը բարակցիր, եփամ մընէք... Արթին աղա դուն քիչ մը հաստցիր տէ, իրարու հետ ալ սիւրով ապրեցէք, հայտէ պագտուեցէք նայիմ, ա'լ խապահովներնիդ ափ ըրէք իրարու,

Արք. — Եկուր Եւփիմէ...

Եւփ. — Արթին աղա...

Գառ. — Հա չէօյլէ... էփթիկը Եւփիմէ Բասքալն ալ Արթին հաշտութիւնն... փրանքօ-թրքական պատերազմը վերջացաւ:

Ա Ա Ա Ա



ՀՀ Ազգային գրադարան



NL0371327

61959

Ա. Զ. Ա. Մ. Ա. Յ. Ե. Ն. Ա. Շ. Ա. Բ.

Զարդարեան Գրատունք այս անունով հրատարակուծ է հիմ և նու ազգային ու հայրենապետական գործերու շաբ մը ոռոնք մեծապէս զերա ուած են ընթեցասէր հասարակութեան կողմէ :

1.	Սեւ Հովեր կամ Յետին Գիշեր Արարատեան, թատ-	գրա.
	րերդութիւն Պետրոս Դաւթեանի, 5 արար	2
2.	Աւերակ (Քանչի լիւսաւակիներ), Վահան Թողթովենցի	1
3.	Ընդարձակ Հայկական Երգարան, Ա. Հասոր . . .	3 1/2
4.	Վանզոյժ Խրիմեան Հայրիկի	1 1/2
5.	Երգեր և Տաղեր, Պ. Գուրեհան (պատկերով)	1
6.	Հայզոյժ Խրիմեան Հայրիկի	2
7.	Ընդարձակ Հայկական Երգարան, Բ. Հասոր . . .	3 1/2
	Նոյնը Ա. և Բ. Հասոր 7 1/2, լաթակազմ	10
8.	Աւերունն Անի մայրակալպահին, թատր. Պ. Դուր.	2
9.	Յաւիմ Տուրի, (Քանչի լիւսաւակիներ, Լ. Շաթրեան	4
10.	Եղիա Տեմբրախպատեան, Լ. Էսաճաննեան (պատկ.)	1 1/2
11.	Երիտասարդը, Տ.ք. Լուի Պէնքս, թարգմ. Խօղմէրի	1 1/2
12.	Չայնազրուած Հայկ. Էրգարան, Բ. Կանաչեան Ա. Մաս	5
13.	Ժամանակ և Խորհուրդ իւր, Խրիմեան Հայրիկ,	
	հասովթը ի նպաստ Վանայ Վարագայ Վանքին .	1
14.	Սով և Մահ, Աւրուր.	1
15.	Մելիկ Քերուաններ, Վահան Թողթովենցի	2
16.	Ընդարձակ Հայկական Երգարան, Գ. Հասոր . . .	3 1/2
	Նոյնը Ա. Բ. Գ. Հասոր 10 դրչ. լաթակազմ	12 1/2
17.	Հայ Հերոփ Արօւանիք, Սշուղ Շահնազար . . .	3
18.	Ֆրանկո-քրիստոն պատերազմ կամ Զարօվլը Արքին աղաս, կատակերգ. Եր. Օսման, Յ արար . . .	3
19.	Պատասխան Բուռ. Մինօդի Բանադրագրին Լ. Թողթովոյ	1

Դիմել Զարդարեան Գրատուն, Կ. Պոլիս, Զայդմազըլլար,
թիւ 24-26:

ԳԻՆԸ Յ ՂՐՈՒՇ